L'ARMÉNIE DOIT ÊTRE PLUS EUROPÉENNE, ET L'EUROPE AUSSI

(Interview avec le leader du parti *Héritage* Raffi Hovhannisian)

Aude Merlin, enseignante en sciences politiques à l'Université libre de Bruxelles, souhaitait rencontrer des hommes politiques d'Arménie dans le cadre de ses recherches sur le Caucase. Elle a souhaité que nous, Garik Galstyan et Louisette Lamarche, représentant la gazette *Ma-Sis* de la communauté arménienne de Lille, l'accompagnions chez Raffi Hovannisian que nous lui avions conseillé de rencontrer. R. Hovhannissian, qui est à la tête du parti *Heritage*, a très aimablement accepté de nous recevoir dans les locaux de *The Armenian Center for National and International Studies* (ACNIS). Cette fondation est un centre indépendant de recherches stratégiques fondé en 1994 à l'initiative de Raffi Hovannisian et soutenu par *The Lincy Foundation*. Le Centre se focalise sur des études dans les domaines de la politologie, de l'économie et de la société. Il réalise également des sondages d'opinion publique.

Raffi Hovannisian est une figure politique de premier plan en Arménie et fut un challenger central lors des élections présidentielles de février 2013. Selon certaines estimations indépendantes, il serait même le vainqueur des élections présidentielles, face à Serge Sargsyan. En tous les cas, il est une figure charismatique qui se fait fort de représenter une alternative pour son pays. Il a par ailleurs été le premier ministre des Affaires étrangères (1991-1992) de l'Arménie indépendante après l'effondrement de l'Union soviétique, sous la présidence de Levon Ter-Petrossian.

Aude Merlin et *Ma-Sis* : *Comment caractériser l'Arménie d'aujourd'hui et comment serait-elle dans votre idéal ?*

Raffi Hovhannisian : Les Arméniens sont très riches de leur culture et de leur histoire. C'est la première nation devenue chrétienne mais elle a une très courte expérience de gouvernance.

Historiquement, la tragédie arménienne est plus qu'un génocide, au-delà des personnes humaines, c'est aussi un territoire et une

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԱՎԵԼԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ, ԵՎ ԵՎՐՈՊԱՆ՝ ՆՈՒՅՆՊԵՍ

(Հարցազրույց «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանի հետ)

Բրյուսելի Բաց համալսարանի քաղաքական գիտությունների դասախոս Օդ Մերլենը ցանկություն էր հայտնել Կովկասի մասին իր հետազոտությունների շրջանակներում հանդիպել Հայաստանի քաղաքական գործիչների հետ: Գարիկ Գալստյանի ու Լուիզեթ Լամարշի, որոնք ներկայացնում են լիլահայ համայնքի «Մա-Սիս» թերթը, խորհրդով նա հանդիպման համաձայնություն ստացավ Րաֆֆի Հովհաննիսյանի հետ և խնդրեց իրեն ընկերակցել այդ առիթով: Րաֆֆի Հովհաննիսյանը գլխավորում է «Ժառանգություն» կուսակցությունը: Նա սիրալիրորեն համաձայնեց ընդունել մեզ Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնում (ՌԱՀՀԿ): Այս հաստատությունը հիմնադրվել է 1994 թ.՝ Րաֆֆի Հովհաննիսյանի նախաձեռնությամբ և «Լինսի հիմնադրամ»ի աջակցությամբ: Կենտրոնի ուսումնասիրությունները բևեռված են քաղաքագիտության, տնտեսագիտության և հասարակագիտության բնագավառների վրա, իրականացվում են նաև հասարակական կարծիքի հարցումներ:

Րաֆֆի Հովհաննիսյանը Հայաստանի ճանաչված քաղաքական գործիչներից է: Նա 2013 թ. փետրվարի նախագահական ընտրությունների ժամանակ հիմնական թեկնածուներից էր: Որոշ անկախ հետազոտությունների համաձայն՝ նա այդ ընտրություններում նույնիսկ հաղթել է Սերժ Սարգսյանին: Ամեն դեպքում, Ր. Հովհաննիսյանը այն ազդեցիկ գործիչն է, ով իրեն համարում է երկրի համար այլընտրանքային ներկայացուցիչ: Ի դեպ, Խորհրդային Միության փլուզումից հետո Լևոն Տեր-Պետրոսյանի օրոք նա եղել է անկախ Հայաստանի առաջին արտգործնախարարը (1991-1992):

Օդ Մերլեն և «Մա-Սիս». – *Ինչպե՞ս կբնութագրեիք այսօրվա Հայաստանը և ինչպիսի՞ն կուզենայիք այն տեսնել:*

Րաֆֆի Հովհաննիսյան. – Հայերը շատ հարուստ մշակույթ և պատմություն ունեն: Նրանք առաջին քրիստոնյա ազգն են, բայց կառավարման շատ քիչ փորձ ունեն:

Պատմականորեն հայոց ողբերգությունն ավելին է, քան ցեղասպանությունը. մարդկային ռեսուրսներից բացի անէացավ նաև մի տարածք և մի ամբողջ հասարակություն՝ իր եկեղեցիներով, դպրոցներով, հիվանդանոցներով, ձեռնարկություններով և այլն: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանին տրվեց մի երկրորդ հնարավորություն՝ ազգերի միության շարքում իր տեղը վերադտնելու համար: Ինձ, որպես ցեղասպանությունից մազապուրծ փրկվածի թոռանը, մեծ պատիվ էր քանմեկ տարի առաջ տեսնել ՄԱԿ-ում ծածանվող Հայաստանի դրոշը: Բայց ի՞նչ արժեք ունի այս դրոշը, եթե Հայաստանի Հանրապետությունը չի կայանում: Ես կուզենայի Հայաստանը տեսնել ժողովրդավարական և եվրոպական: Հուսով եմ, որ Թուրքիայի Հանրապետությունն իր վրա կվերցնի հայոց ցեղասպանության պատասխանատվությունը, ինչը կհանգեցնի երկու երկրների հարաբերությունների բարելավմանը, փոխհատուցման գործընթացին և սահմանների բացմանը: Սակայն կցանկանայի նաև, որ Հայաստանը նույնպես իր վրա վերցներ և կատարեր իր առջև դրված պարտավորությունները:

société entière qui ont disparu : les églises, les écoles, les hôpitaux, les entreprises, *etc*. À la fin de l'Union soviétique, une deuxième chance a été donnée à l'Arménie pour reprendre une place dans le concert des nations. C'est un grand honneur pour moi, en tant que petit-fils de rescapés du génocide, d'avoir pu voir, il y a 21 ans, le drapeau arménien être érigé à l'ONU. Mais quelle valeur a ce drapeau si la République ne se réalise pas ? Je voudrais voir une Arménie démocratique et européenne ; j'espère que la République turque va reconnaître ses responsabilités dans le génocide et va œuvrer à la normalisation des relations entre les deux pays, à la restitution des biens et à l'ouverture des frontières. Mais je voudrais aussi que l'Arménie prenne ses responsabilités et les assumes.

Depuis 21 ans, l'Arménie n'a, en effet, pas connu de transmission normale du pouvoir. Les Arméniens doivent pouvoir instaurer les mêmes valeurs et les mêmes droits entre eux, dans leur État, que ceux qu'ils demandent de reconnaître aux autres nations sur les sujets du génocide et du Karabakh. C'est la même exigence. L'intégration à l'Europe pourra ensuite être demandée et je la souhaite ardemment.

Depuis son indépendance, l'Arménie a perdu par émigration autant de population que pendant le génocide : 1 million et demi, et nous sommes responsables de cette émigration. C'est un véritable désaveu des politiques mises en place jusqu'à présent. La population a plusieurs fois marqué son désaccord mais face à ce désespoir c'est la verticale du pouvoir à la soviétique qui s'est imposée. C'est très dangereux pour la sécurité et la pérennité du pays. Si cela continue à ce rythme, dans cinq ans la situation pourrait être désespérée. Il y a urgence de travailler sur un programme pour stopper cette hémorragie, et j'ai adressé un message en ce sens au Président de la République actuel. Et là ce n'est pas une question de choix entre Raffi ou Serge, il s'agit de prendre les problèmes à bras-le-corps au-delà des clivages politiques. Il faut continuer la lutte. Et là, je vous parle en tant que dirigeant du parti *Heritage* mais aussi en tant que citoyen qui a probablement gagné les élections : si elles avaient eu lieu en France ou en Belgique, on se verrait aujourd'hui dans un tout autre lieu !

Ce qui est primordial, c'est de faire vivre et se développer chez les Arméniens eux-mêmes un respect absolu de leur propre identité. L'identité d'hier mais aussi l'identité à construire aujourd'hui et demain. Le futur est entre leurs mains. C'est à eux de le bâtir. Très modestement, je suis revenu avec ma famille pour participer à la lutte que mène l'Arménie pour sa propre identité.

Mon objectif est que l'Arménie soit pleinement démocratique et souveraine, respecte sa propre identité, détermine son intérêt national, institue une exigence constitutionnelle et restaure ainsi la légitimité de ses autorités. C'est d'abord aux Arméniens d'assumer leurs propres responsabilités.

AM et M-S : *L'Europe peut-elle aider l'Arménie ?*

RH : Le rôle de l'Europe peut être bien sûr un levier pour notre pays. Mais elle n'est pas honnête dans son suivi des élections en Arménie. L'Europe devrait être plus critique, plus intransigeante, plus « européenne » dans la reconnaissance des valeurs à faire respecter en Arménie. Elle a félicité S. Sargsyan, alors que les élections n'ont pas été honnêtes ! Vous le savez mieux que moi : l'Union européenne n'est pas cohérente dans la promotion de ses propres valeurs. L'Europe a reconnu l'Holocauste mais ne reconnaît pas, dans son ensemble, le génocide arménien.

Mon espoir est que l'Europe reconnaisse le droit à l'autodétermination de l'Artsakh, comme elle l'a fait pour le Kosovo, ou comme la Russie l'a fait pour l'Abkhazie et l'Ossétie du Sud. L'Arménie doit être plus européenne, et l'Europe aussi ! L'Europe et les États-Unis devraient mieux aider l'Arménie à diversifier sa politique économique et stratégique, en respectant tous les pays y compris la Russie.

AM : *Est-ce possible ?*

Վերջին 21 տարիների ընթացքում Հայաստանում նորմալ իշխանափոխություն տեղի չի ունեցել: Հայերն իրենց երկրի ներսում և իրար մեջ պետք է ունակ լինեն հաստատելու այն նույն արժեքներն ու իրավունքները, որոնք պահանջում են այլ ազգերից` Ղարաբաղին ու ցեղասպանությանն առնչվող հարցերում: Սա նույն պահանջն է: Այնուհետև հնարավոր կլինի հայց ներկայացնել եվրոինտեգրման համար, որի ջատագովներից եմ նաև ես:

Photo : Garik Galstyan

Louisette Lamarche, Raffi Hovhannisian, Aude Merlin et Garik Galstyan
Լուիզեթ Լամարշը, Րաֆֆի Հովհաննիսյանը, Օդ Մերլենը և Գարիկ Գալստյանը

Անկախությունից ի վեր արտագաղթի պատճառով Հայաստանն այնքան բնակչություն է կորցրել, որքան ցեղասպանության ժամանակ` 1,5 միլիոն մարդ: Եվ մենք ենք այդ արտագաղթի պատասխանատուները: Դա մինչև այժմ իրականացված քաղաքականության ձախողման հետևանքն է: Բնակչությունը բազմիցս արտահայտել է իր բողոքը: Սակայն այս հուսահատությանը հակադրվել է իշխանության ուղղահայաց համակարգը` խորհրդային իշխանության մեթոդներով: Սա շատ վտանգավոր է երկրի անվտանգության և հարատևության համար: Եթե այսպես շարունակվի, ապա հինգ տարուց հետո իրավիճակը կարող է հուսահատական դառնալ: Պետք է շտապ մշակել ծրագրեր այդ կտրուկ վատթարացման դեմն առնելու համար: Ահա այս մասին է իմ ուղերձը, որն ուղարկել եմ Հանրապետության այսօրվա նախագահին: Եվ այստեղ հարցը ոչ թե Րաֆֆիի կամ Սերժի ընտրության, այլ խնդիրների միասնաբար և արմատական լուծման մեջ է` անկախ քաղաքական տարաձայնություններից: Պայքարը պետք է շարունակվի: Եվ ես դա ասում եմ ոչ միայն որպես «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ, այլ նաև որպես քաղաքացի, ով ամենայն հավանականությամբ հաղթել է ընտրություններում: Եթե դրանք տեղի ունենային Ֆրանսիայում կամ Բելգիայում, ապա մենք այսօր կհանդիպեինք միանգամայն այլ վայրում:

Ամենակարևորը, սեփական ինքնությունը անվերապահորեն կյանքի կոչելու և հարգելու գաղափարն է հենց իրենց` հայերի կողմից: Ինչպես երեկվա, այնպես էլ այսօրվա ու վաղվա կառուցվող ինքնությունը: Ապագան հենց հայերի ձեռքերում է: Իրենք էլ պետք է կերտեն այդ ինքնությունը: Ես ընտանիքիս հետ պարզապես վերադարձա Հայաստան` մասնակցելու սեփական ինքնության համար մղվող պայքարին:

Իմ նպատակն է, որ Հայաստանը լինի ժողովրդավարական և ինքնիշխան, հարգի իր սեփական ինքնությունը, սահմանի իր ազգային շահերը, հարգի ու պահպանի սահմանադրական պահանջները և այսպիսով վերականգնի իշխանությունների օրինականությունը: Առաջին հերթին հայերն իրենք են պատասխանատու այս ամենի համար:

Օ. Մ. և Մ-Ս. – *Կարո՞ղ է, արդյոք, Եվրոպան օգնել Հայաստանին:*

Ր. Հ. – Եվրոպան, իհարկե, կարող է օգտակար լծակ լինել մեր երկրի համար: Բայց նա ազնիվ չգտնվեց Հայաստանում տեղի ունեցած ընտրությունների հարցում: Եվրոպան պետք է լինի ավելի քննադատ, ավելի խստապահանջ, ավելի «եվրոպական»`

RH : Je suis né aux États-Unis et je ne crois pas aux théories conspiratrices qui prédestinent le devenir des peuples.

M-S : *L'assouplissement politique de la Russie pourrait-il avoir des conséquences sur la situation politique en Arménie ?*
RH : Je ne pense pas qu'il y ait un lien direct entre les deux, en tout cas ce n'est pas une condition préalable. L'Arménie doit avancer vers la démocratie, indépendamment de la Russie.

AM et M-S : *Quelle est la place des régions et campagnes, de l'échelon local, et de la société civile dans la possibilité d'amélioration de la situation ?*
RH : L'État n'est pas tout. L'échelon local et sociétal est également à travailler. C'est ce que j'ai essayé de faire en me rendant régulièrement dans les provinces. L'onde de la révolution est également présente là-bas. Les manifestations de contestation des résultats des élections de février 2013 n'ont pas eu lieu seulement à Erevan, mais aussi dans les provinces. On n'a pas eu de changement de pouvoir du bas vers le haut, à l'européenne. Nous avons travaillé avec la société civile. La société civile doit évoluer et prendre sa place dans le débat et les propositions à faire au niveau local. Depuis quelques mois, celle-ci se structure. Mais il y a un abîme entre la société civile et les forces politiques.



Family of shadows, le livre de Garin Hovhannisian, fils de R.Hovhannisian, sorti en arménien et en anglais
Ր. Հովհաննիսյանի որդի՝ Կարին Հովհաննիսյանի անգլերեն և հայերեն հրատարակած «Գերդաստան ստվերաց» գիրքը

Le chemin est difficile, il y a beaucoup de corruption. Les ONG, les forces politiques se discréditent l'une l'autre. La volonté est là, j'ai pu le constater lors des manifestations place de la Liberté. Les présents me disaient : « Nous n'avons pas voté pour toi mais si nous nous associons, nous pourrions changer la situation ». Ce n'est pas le combat d'un homme contre un autre, c'est l'union de toutes les bonnes volontés et intelligences qu'il s'agit de réaliser pour « passer la fenêtre » vers la démocratie et le rétablissement du pays.

L'Arménie est petite en population et en territoire. Elle souffre de nombreux problèmes sociaux (50% de sa population vit sous ou au niveau du seuil de pauvreté) et sociologiques. L'organisation de la société est très clanique. Cela a l'avantage de tisser des solidarités qui évitent aux populations de sombrer dans la misère. Mais d'un autre côté, cela crée une organisation sociale où les emplois, les postes, les fonctions sont allouées par affinité et non souvent en fonction des compétences. Cela crée des liens de redevance forts, voire de servilité, à l'égard du clan.

L'Arménie a besoin de revenir à plus de méritocratie, pour que de vraies compétences soient mobilisées au profit de tous sans référence aux clans ou aux opinions politiques. Les mentalités doivent donc évoluer.

Հայաստանում իր արժեքների ճանաչման և իրագործման խնդիրներում: Նա շնորհավորեց Ս. Սարգսյանին այն դեպքում, երբ ընտրությունները արդար չէին: Դուք սա ինձնից ավելի լավ գիտեք. Եվրոմիությունը հետևողական չէ իր իսկ արժեքների տարածման և ներդրման գործում: Եվրոպան ճանաչել է Հոլոքոստը, բայց չի ճանաչում հայոց ցեղասպանությունն իր ամբողջությամբ:

Ես հուսով եմ, որ Եվրոպան կճանաչի Արցախի ինքնորոշումը, ինչպես Կոսովոյինը, կամ ինչպես Ռուսաստանը վար-վեց Աբխազիայի և Հարավային Օսիայի պարագայում: Հայաս-տանը պետք է լինի ավելի եվրոպական, և Եվրոպան՝ նույնպես: Եվրոպան և Միացյալ Նահանգները պետք է օգնեն Հայաստանին տնտեսական և ռազմավարական քաղաքականությունն ավելի բազմակողմանի դարձնելու գործում՝ հարգելով մյուս երկրներին, այդ թվում՝ Ռուսաստանին:

Օ. Մ. – *Դա հնարավո՞ր է, արդյոք:*
Ր. Հ. – Ես ծնվել եմ Միացյալ Նահանգներում և չեմ հավատում դավադրական տեսություններին, որոնք կանխորոշում են ժողովուրդների ապագան:

Մ-Ս. – *Կարո՞ղ է, արդյոք, Ռուսաստանի ավելի ճկուն քաղաքականությունն իր ազդեցությունը թողնել Հայաստանի քաղաքական իրավիճակի վրա:*
Ր. Հ. – Ես չեմ կարծում, թե այդ երկուսի միջև անմիջական կապ կա, բայց ամեն դեպքում սա նախապայման չէ: Հայաստանը Ռուսաստանից անկախ պետք է առաջ գնա դեպի ժողովրդավարություն:

Օ. Մ. և Մ-Ս. – *Տեղական մակարդակով ո՞րն է մարզերի ու գյուղերի և քաղաքացիական հասարակության դերը իրավիճակի բարելավ-ման հնարավորությունների գործում:*
Ր. Հ. – Պետությունն ամեն ինչ չէ, որ որոշում է: Տեղական և հասարակության մակարդակով նույնպես պետք է աշխատել: Ես փորձում եմ դա անել՝ պարբերաբար մարզերն այցելելով: Հեղափոխության ալիքը նույնպես առկա է այստեղ: 2013 թ. փետրրվարյան ընտրությունների արդյունքների դեմ բողոքի ցույցեր եղան ոչ միայն Երևանում, այլ նաև մարզերում: Իշխանափոխություն ներքևից վերև, ինչպես Եվրոպայում, տեղի չունեցավ:

Photo : www.hetq.am

Les représentants des trois générations des Hovhannisian (de gauche à droit) :
Garin, Raffi et le célèbre historien Richard Hovhannisian
Հովհաննիսյանների երեք սերունդների ներկայացուցիչները (ձախից՝ աջ)՝ Կարինը, Րաֆֆին և հանրաճանաչ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը

Մենք աշխատանք կատարեցինք քաղացիական հասարակության հետ: Քաղացիական հասարակությունը պետք զարգանա, ունենա իր տեղը բանավեճերի գործընթացում և տեղական մակարդակով հանդես գա առաջարկություններով: Մի քանի ամիս է, ինչ այն սկսել է ձևավորվել: Սակայն քաղացիական հասարակության և քաղաքական ուժերի միջև եղած անջրպետը շատ խորն է:

AM et M-S : *Quelle est votre attente vis-à-vis des Arméniens récemment immigrés en Arménie ?*

RH : Pour moi, la restauration de la démocratie et de l'État de droit est un préalable indispensable pour restaurer la confiance. Ensuite, c'est une question de choix et de volonté individuelle de rentrer et de se réinvestir dans le pays. Il existe plusieurs générations différentes d'immigration. Pour ma part, je suis petit-fils de la génération qui a vécu le génocide et a été chassée de son territoire, un petit-fils de la diaspora du génocide. Je suis rentré en Arménie pour aider à la restauration de l'identité du pays, pour participer à sa reconstruction. Après quelques années, les Arméniens ont accepté mon accent. Toutes les diasporas, les communautés du pays doivent se souder pour avancer et sortir de la stagnation postsoviétique. La diaspora doit avoir un amour exigeant, un engagement critique vis-à-vis de l'Arménie. C'est une tension créatrice et respectueuse entre diaspora et Arménie qu'il faut instaurer pour améliorer la situation.

AM et M-S : *Vous êtes romantique ou réaliste ?*

RH : Je me considère à la fois comme romantique et réaliste. Pour moi rien n'est impossible, c'est une question de volonté collective.

M-S : *Quelles sont les solutions ?*

RH : J'ai reçu officiellement 540 000 voix, c'est-à-dire 37 % des voix. Certains auraient voulu prendre le pouvoir quitte à ce que le sang coule. Je ne suis pas de ceux là. La situation est très difficile, tant sur le plan intérieur qu'extérieur. Mais les solutions, dans lesquelles s'inscrit notre démarche, sont : les droits de l'Homme, la démocratie, la légitimité, le retour de la nation.

Aude Merlin et la gazette *Ma-Sis*
Juillet 2013, Erevan

IL A ÉTÉ CONSTITUÉ UN ÉTAT QUI N'EST PAS AU SERVICE DE SON PEUPLE

(Interview avec la députée (du parti *Héritage)* du Parlement arménien Zarouhi Postanjian)

Zarouhi Postanjian, juriste-légiste et femme politique, est députée du parlement arménien depuis sept ans. Elle est membre du parti d'opposition *Héritage*. Z. Postanjian est née en 1972, à Erevan. En 1994, elle a terminé ses études de droit. En 1999, elle a obtenu sa licence pour exercer des activités d'avocate. À à la même année, Z. Postanjian est devenue membre du barreau des avocats de la République d'Arménie. Elle a effectué différents stages professionnels aux États-Unis, en Suède, en Pologne et en France. De 2000 à 2007,

Photos : Garik Galstyan

Zarouhi Postanjian dans son bureau de l'Assemblée nationale
Զարուհի Փոստանջյանն Ազգային Ժողովի իր աշխատասենյակում

Անցնելու ճանապարհը դժվար է, կոռուպցիայի չափերը՝ մեծ: Ոչ կառավարական կազմակերպությունները և քաղաքական ուժերը վարկաբեկում են մեկը մյուսին: Կա կամք, և ես դա տեսա Ազատության հրապարակում: Ներկաներն ասում էին ինձ. «Մենք քեզ ձայներ չենք տվել, բայց եթե միանանք, կարող ենք փոխել իրավիճակը»: Սա մեկ մարդու պայքար չէ մյուսի դեմ, այլ բոլոր դատող և բարի կամքի ուժերի միասնություն, որի նպատակն է պատուհան բացել դեպի ժողովրդավարություն և վերականգնել երկիրը:

Հայաստանն ունի փոքր տարածք և քիչ բնակչություն: Առկա են բազմաթիվ սոցիոլոգիական և սոցիալական խնդիրներ. բնակչության 50%-ը գտնվում է աղքատության շեմից ցածր վիճակում կամ աղքատության շեմին: Հասարակության հարաբերությունների կառուցվածքը խիստ կլանային է: Սրա առավելությունն այն է, որ մարդկանց ցուցաբերած համերաշխությունը հնարավորություն է տալիս չքավորությունից խուսափել: Բայց մյուս կողմից այսպիսի կառուցվածքի արդյունքում աշխատատեղերն ու պաշտոնները հաճախ բաշխվում են ոչ թե ըստ մասնագիտական բանիմացության սկզբունքի, այլ ելնելով ծանոթ-բարեկամ հարաբերություններից: Դա հանգեցնում է կլանի հանդեպ խիստ պարտավորվածության, մինչև անգամ ստորաքարշության հասնող վիճակի:

Հայաստանը պետք է նախապատվություն տա մերիտոկրատիային, որպեսզի իսկական մասնագիտական բանիմացությունը մոբիլիզացվի հօգուտ բոլորիս՝ նախապատվություն չտալով կլանային խմբավորումներին կամ էլ հասարակական կարծիքներին: Մտածելակերպն, այսպիսով, պետք է փոխվի:

Օ. Մ. և Մ-Ս. – Ի՞նչ սպասելիքներ ունեք վերջերս Հայաստան ներգաղթած հայերից:

Ր. Հ. – Ըստ իս, ժողովրդավարական և իրավական պետության վերականգնումն անհրաժեշտ նախապայման է փոխվստահությունը վերականգնելու համար: Այնուհետև, յուրաքանչյուրի անհատական ընտրությունից և կամքից է կախված վերադառնալ և ներդրումներ կատարել հայրենիքում: Գոյություն ունեն գաղթյալների տարբեր սերունդներ: Ինչ ինձ է վերաբերում, ես ցեղասպանությունը վերապրած և իր բնօրրանից բռնի տեղահանված սերընդի թոռ եմ՝ ցեղասպանությունից առաջացած սփյուռքի թոռ: Ես վերադարձա Հայաստան՝ օգնելու վերահաստատելու երկրի ինքնությունը, մասնակցելու նրա վերակառուցմանը: Մի քանի տարի ապրելուց հետո հայաստանցիներն ընդունեցին իմ խոսքային առոգանությունը: Ամբողջ սփյուռքը և երկրի բոլոր համայնքները պետք է միավորվեն՝ առաջընթացի և հետխորհրդային լճացումից ձերբազատվելու համար: Հայաստանի նկատմամբ Սփյուռքն իր ստանձնած պարտավորվածությունների մեջ պետք է լինի քննադատական, իսկ նրա սերը՝ պահանջկոտ: Իրավիճակը բարելավելու համար Հայաստանի և Սփյուռքի միջև պետք է հաստատվեն ստեղծագործ և փոխհարգալից հարաբերություններ:

Մ-Ս. – *Դուք ռոմանտի՞կ եք, թե՞ իրատես:*

Ր. Հ. – Ես ինձ համարում եմ և՛ ռոմանտիկ, և՛ իրատես: Իմ կարծիքով, հավաքական կամքի դեպքում անհնարին ոչինչ չկա:

Մ-Ս. – *Իսկ որո՞նք են լուծումները:*

Ր. Հ. – Պաշտոնապես ես ստացել եմ 540 000 ձայն, այսինքն՝ ձայների 37%-ը: Որոշ մարդիկ կցանկանային իշխանությունը վերցնել, այդ թվում նաև արյան գնով: Ես դրանց թվում չեմ: Ինչպես ներքին, այնպես էլ արտաքին իրավիճակները շատ դժվարին են: Մեր որդեգրած լուծումներն են՝ մարդու իրավունքները, ժողովրդավարությունը, օրինականությունը, ազգի վերածնունդը:

Օդ Մերլեն և «Մա-Սիս» թերթ
Հուլիս 2013, ք. Երևան

elle a été la Présidente de l'association des avocats pour les droits de l'homme. Depuis sa prise de fonction de député, elle est membre de la commission permanente des questions juridiques de l'Assemblée nationale.

Malgré un planning très chargé en cette période de protestation populaire contre l'augmentation soudaine de 50% du prix des transports (bus, trolley et minibus) d'Erevan, Zaruhi Postanjian a accepté de nous recevoir et de répondre à nos questions. Les points de vue de cette députée, réputée pour être une juriste qualifiée, passionnée et in-transigeante, nous intéressait tout particulièrement et depuis long-temps.

Ma-Sis : *Nous souhaitions savoir s'il y avait dans la pratique juridique des actions en justice qui sanctionnaient les excès de l'organisation oligarchique et monopolistique en Arménie ?*

Zarouhi Postandjian : Il est impossible de faire un procès à tout un système. Il existe des cas où l'oligarchie a dû reculer. Mais ils sont fort peu nombreux. Il n'y a pas de changements significatifs depuis des années. Les moyens d'action sont aussi très limités. Cependant, je suis pour l'action à petits pas, chacun compte.

M-S : *Les oligarques se rendent-ils compte de l'état de l'Arménie et de la conséquence de leurs actes ?*

ZP : Le niveau de conscience des oligarques sur les conséquences de leurs actes sur l'état catastrophique de l'Arménie est très variable. Certains sont très limités dans leur compréhension et ne mesurent pas la situation, ou ne l'assument pas. D'autres, plus intelligents, se rendent compte du besoin de changements, mais leur statut d'oligarque ne leur permet pas d'avancer dans cette direction. Ils sont liés et tenus par le pouvoir politique actuel. C'est un statut de menace et de pression permanente des uns sur les autres pour faire toujours plus de profit et entretenir leur position. De plus, leur accès à l'oligarchie est toujours basé sur des illégalités. Sortir du système, c'est risquer de se voir reprocher toutes les illégalités faites et de devoir rendre des comptes à ce même système. Ceci pour dire qu'ils sont obligés d'être fidèles au système. L'organisation actuelle du pouvoir ne peut donc pas se réformer, elle se trouve dans l'impasse.

M-S : *Le Président actuel aurait pu changer la situation pendant son premier mandat présidentiel ?*

ZP : Oui, s'il en avait eu la volonté. Mais il a pris trop de décisions illégales et son entourage est bien trop compromis pour revenir à une normalité. De nos jours, l'Arménie vit une des périodes les plus difficiles de son histoire moderne. Il a été constitué un État qui n'est pas au service de son peuple. Selon les sources officielles, plus d'un million de personnes, soit plus de 30% de la population, sont pauvres. C'est une situation jamais connue jusqu'à présent.

Plus de 35% de l'économie arménienne est souterraine. Le budget de l'État est pillé. En 2012, plus de 700 milliards de drams sur 911 milliards sont concernés par des détournements au profit des fonctionnaires d'État au lieu de bénéficier au budget de l'État. L'État fait des achats dont on ne retrouve pas la trace. Les prix de certains achats sont bien au-delà du prix du marché : par exemple, un câble à 130 drams le mètre est facturé à 36 000 drams ! Ces données sont issues du dernier rapport de la Chambre des comptes que le Président a aussitôt critiqué. Sur la base de ces éléments, le Président du Parlement a saisi le procureur d'une plainte sans réponse à ce jour. Cette affaire a pris certainement beaucoup plus d'importance et de retentissement public que le Président en personne ne l'avait imaginé. Vous pouvez voir le détail du rapport et les réactions présidentielles sur les liens suivants :

http://www.youtube.com/watch?v=Ud0Q4JFwiPE
http://www.youtube.com/watch?v=OCn7NE1F0Wc

Ma-Sis : *Quel est le rôle du pouvoir judiciaire en Arménie ?*

ԿԱԶՄԱՎՈՐՎԵԼ Է ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՉԻ ԾԱՌԱՅՈՒՄ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

(Հարցազրույց Ազգային Ժողովի պատգամավոր («Ժառանգություն» կուսակցությունից) Զարուհի Փոստանջյանի հետ)

Իրավաբան-իրավագետ և քաղաքական գործիչ Զարուհի Փոստանջյանն արդեն յոթ տարի (2007 թ.-ից) Հայաստանի Ազգային Ժողովի պատգամավոր է: Նա «Ժառանգություն» ընդդիմադիր կուսակցության անդամ է: Զ. Փոստանջյանը ծնվել է 1972 թ. Երևանում: 1994 թ. նա ստանում է իրավաբանական կրթություն, 1999 թ.՝ փաստաբանական գործունեությամբ զբաղվելու արտոնագիր և նույն թվականից՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անդամ է: Բազմիցս վերապատրաստվել է ԱՄՆ-ում, Շվեդիայում, Լեհաստանում և Ֆրանսիայում: 2000-2007 թթ. եղել է «Փաստաբաններր մարդու իրավունքների համար» հասարակական կազմակերպության նախագահը: Պատգամավորական գործունեությունը սկսելուց ի վեր Ազգային ժողովի պետա-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ է:

Երևանի երթևեկության միջոցների (ավտոբուս, տրոլեբուս և երթուղային տաքսի) սակագների 50 %-ով կտրուկ բարձրացման դեմ մասսայական բողոքների ժամանակաշրջանում, չնայած խիստ ծանրաբեռնված օրակարգին, Զ. Փոստանջյանը համաձայնեց հանդիպել և պատասխանել մեր հարցերին: Բարձրակարգ, նվիրյալ և սկզբունքային իրավաբանի համբավ ունեցող խորհրդարանականի տեսակետները մեզ համար շատ վաղուց առանձնահատուկ հետաքրքրություն էին ներկայացնում:

Մա-Սիս. *– Մենք կցանկանայինք իմանալ՝ հայաստանյան դատական պրակտիկայում կա՞ն, արդյոք, դատավարության օրինակներ, որոնք պատժամիջոցներ են կիրառել Հայաստանի օլիգարխիկ և մենաշնորհային կառույցների չարաշահումների դեմ:*

Զարուհի Փոստանջյան. – Հնարավոր չէ դատավարություն կազմակերպել մի ամբողջ համակարգի դեմ: Կան դեպքեր, երբ օլիգարխիան նահանջել է, սակայն դրանք սակավաթիվ են: Երկար տարիների ընթացքում չկան զգալի փոփոխություններ: Գործողությունների հնարավորությունները նույնպես շատ սահմանափակ են: Սակայն ես կողմնակից եմ փոքրիկ քայլերով գործողություններին, որոնցից յուրաքանչյուրն անարդյունք չի մնա:

Մ-Ս. *– Օլիգարխները պատկերացում ունե՞ն Հայաստանի վիճակի և իրենց գործողությունների հետևանքների մասին:*

Զ. Փ. – Օլիգարխների պատկերացումները իրենց գործողությունների հետևանքների և Հայաստանի աղետալի վիճակի մասին շատ տարբեր են: Նրանց մի մասը բավական սահմանափակ ըմբռնում ունի և ի վիճակի չէ իրավիճակին գնահատական տալու, կամ էլ իր վրա պատասխանատվություն վերցնելու: Համեմատաբար խելացի մյուս մասը գիտակցում է բարեփոխումների անհրաժեշտությունը, բայց օլիգարխի կարգավիճակը նրանց թույլ չի տալիս առաջ գնալ այս ուղղությամբ: Նրանք կապված են և հովանավորվում են ներկա քաղաքական իշխանության կողմից: Այդ կարգավիճակը գտնվում է մշտական փոխադարձ սպառնալիքի ու ճնշման ներքո, որպեսզի ապահովվի գերշահույթ և պահպանվեն իրենց զբաղեցրած դիրքերը: Բացի դրանից նրանք բոլորը օլիգարխիայի մի մասն են դարձել հակաօրինական ճանապարհով: Դուրս գալ այս համակարգից կնշանակի ռիսկի դիմել, արժանանալ կշտամբանքի բոլոր կատարած ապօրինությունների համար և ստիպված լինել հաշվի նստել այդ նույն համակարգի հետ: Ասել է թե, նրանք պարտավոր են համակարգին հավատարիմ մնալ: Այսպիսով, իշխանության ներկա համակարգը չի կարող բարեփոխվել. այն փակուղու մեջ է:

Մ-Ս. *– Ներկա նախագահը կարո՞ղ էր փոխել իրավիճակն իր առաջին նախագահական լիազորությունների ժամանակահատվածում:*

ZP. : Il est très minime. Si ce pouvoir était assaini, la société respirerait plus librement. Les plaintes contre les injustices provenant des décisions du pouvoir judiciaire sont très nombreuses. En matière d'élections, par exemple : toutes les dépenses réalisées pour la location de locaux dans les différents quartiers d'Erevan pour les équipes de campagne de Serge Sargsyan n'ont pas été intégrées aux comptes de campagne de ce candidat. Le budget pour ce dernier est ainsi dépassé de 5 à 6 fois plus que la norme autorisée légalement. Deux contentieux ont été engagés auprès de la Cour constitutionnelle d'Arménie. L'un pour contester l'élection du Président Sargsyan qui a été rejeté, et l'autre pour l'iniquité des moyens alloués pour la campagne électorale entre ce candidat et les autres, qui n'a jamais été étudié.

Depuis sa création, la Cour constitutionnelle n'a qualifié d'inconstitutionnelle que de rares décisions. Ses membres appartiennent à l'oligarchie directement ou par lien familial. L'Arménie est un petit pays, il y a beaucoup de liens familiaux solides entre les gens, tout particulièrement entre ceux qui disposent d'un pouvoir de quelque nature que ce soit (politique, judiciaire, économique, policier, militaire …).

Photos : Garik Galstyan

Louisette Lamarche et Zarouhi Postanjian dans son bureau de députée
Լ. Լամարշը և Զ. Փոստանջյանը՝ պատգամավորական աշխատասենյակում

Ma-Sis : *Dans ces conditions actuelles, comment imaginer l'avenir de l'Arménie ?*

ZP. : L'espoir pour l'Arménie serait d'avoir pour dirigeant une personne sans relation d'aucune sorte avec le pouvoir antérieur, complètement indépendant de l'oligarchie. En Arménie il existe des personnes compétentes qui permettraient de créer une dizaine de gouvernements différents, mais la volonté politique d'utiliser correctement ce potentiel n'existe pas aujourd'hui. Seule l'arrivée de gouvernants neufs et indépendants permettra à cette élite de travailler. Sinon elle finira par être anéantie.

À la présidentielle du 18 février, Raffi Hovanissian est arrivé en tête des élections dans les grandes villes d'Arménie, même à Kapan, le fief de Serge Sargsyan. Ce dernier s'est servi des campagnes pour modifier le résultat des élections alors que celles-ci ont un poids démographique faible. Il a fait voter les électeurs absents ! Dans la Région de Gegharkunik, la plus touchée par l'émigration, il y a eu un taux de participation proche de 100% dans certains bureaux de vote, ce qui est impossible dans la réalité ! Le nombre de votants sur certains bureaux de vote est supérieur à ce que celui-ci peut matériellement enregistrer, il ne peut y avoir un votant chaque 30 secondes !

L'Arménie ne permet pas le vote à distance pour les émigrés via ses ambassades et consulats dans les pays concernés. Seuls les diplomates arméniens et leurs familles sont autorisés à voter ainsi. La pratique de vote par procuration n'existe pas non plus. Les

Զ. Փ. – Այո՛, եթե նա դրա կամքն ունենար: Բնականոն իրավիճակին վերադառնալու համար նա շատ անօրինական որոշումներ է կայացրել և նրա շրջապատը խիստ վարկաբեկված է: Այսօր Հայաստանն ապրում է իր ժամանակակից պատմության ամենադժվարին շրջաններից մեկը: Կազմավորվել է պետություն, որը չի ծառայում իր ժողովրդին: Ըստ պաշտոնական աղբյուրների, մեկ միլիոնից ավելի մարդ կամ բնակչության ավելի քան 30 տոկոսն աղքատ է: Մինչև օրս մենք չենք ունեցել այսպիսի իրավիճակ:

Հայաստանի տնտեսության 35 տոկոսից ավելին ստվերային է: Պետական բյուջեն թալանվում է: 2012 թ. պետական պաշտոնյաների կողմից հափշտակվել է մոտ 700 միլիարդ դրամ (911 միլիարդից), այն դեպքում, երբ այդ գումարները կարող էին ծառայել պետական բյուջեին: Պետությունը կատարում է գնումներ, որոնց հետքերը դժվար է գտնել: Որոշ գնումների արժեքը շուկայական գներից բավական բարձր են: Օրինակ՝ մետրը 130 դրամ արժեցող մալուխը կատարման ակտերով արժե ... 36 000 դրամ: Այս տվյալները բերված են Վերահսկիչ պալատի վերջին հաշվետվությունից, որն անմիջապես արժանացել էր նախագահի քննադատությանը: Այդ հիմքով Ազգային Ժողովի նախագահը բողոքով դիմել է դատախազին և մինչև օրս պատասխան չկա: Այս գործն այնպիսի հասարակական հնչեղություն ստացավ, որն անսպասելի էր անգամ հանրապետության նախագահի համար: Դուք կարող եք նայել հաշվետվության և նախագահական արձագանքների մանրամասերը՝ հետևելով հետևյալ կայքերին՝

http://www.youtube.com/watch?v=Ud0Q4JFwiPE
http://www.youtube.com/watch?v=OCn7NE1F0Wc

Մ-Ս. *– Ինչպիսի՞ն է դատական իշխանության դերը Հայաստանում:*

Զ. Փ. – Այն խիստ աննշան է: Եթե այս իշխանությունն առողջանար, ապա հասարակությունն ավելի ազատ կշնչեր: Դատական իշխանությունների կողմից կայացրած անարդար որոշումների դեմ բողոքները չափազանց շատ են: Օրինակ՝ ընտրություններին վերաբերող. Սերժ Սարգսյանի ընտրաթիմերի համար Երևանի տարբեր թաղամասերում գրասենյակների վարձակալության բոլոր գումարները չեն մտցվել այս թեկնածուի ընտրարշավի ծախսերի մեջ: Վերջինիս ընտրական բյուջեն այսպիսով 5-6 անգամ գերազանցում է օրենքով թույլատրված նորման: Հայաստանի Սահմանադրական դատարանին է ուղղվել երկու բողոք: Դրանցից մեկը, որը վիճարկում էր նախագահ Սարգսյանի ընտրությունը, մերժվել է, իսկ մյուսը, որը վիճարկում էր այս և մյուս թեկնածուների ընտրարշավին հատկացված միջոցների անհամաչափ լինելը, այդպես էլ վարույթի չի ընդունվել:

Իր ստեղծման օրից ի վեր Սահմանադրական դատարանը եզակի որոշումներ է որակել հակասահմանադրական: Նրա անդամները ուղղակիորեն կամ էլ ընտանեկան կապերով օլիգարխիային են պատկանում: Հայաստանը փոքրիկ երկիր է, մարդկանց միջև ընտանեկան հարաբերությունները շատ ամուր են, հատկապես նրանց միջև, ովքեր ցանկացած բնույթի իշխանության՝ քաղաքական, իրավական, տնտեսական, ոստիկանական, զինվորական, մասն են կազմում:

Մ-Ս. *– Այժմ ինչպե՞ս կարելի է պատկերացնել Հայաստանի ապագան:*

Զ. Փ. – Հայաստանի հույսը կարող է լինել մի այնպիսի ղեկավար, ով չի ունենա որևէ հարաբերություն նախորդ իշխանության հետ և բացարձակապես անկախ կլինի օլիգարխիայից: Հայաստանում այսօր կան իրավասու մարդիկ, ովքեր ունակ կլինեն կազմելու տասնյակ տարբեր կառավարություններ, բայց չկա քաղաքական կամք նրանց ներուժը ճիշտ օգտագործելու: Միայն նոր և անկախ կառավարությունները հնարավորություն կտան այդ սերուցքին աշխատելու: Հակառակ դեպքում ամեն ինչ կվերջանա նրա ոչնչացմամբ:

Փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների ժամանակ Րաֆֆի Հովհաննիսյանն ամենաշատ ձայներն էր հավաքել Հայաստանի մեծ քաղաքներում, անգամ Կապանում՝ Սերժ Սարգսյանի հենակետում: Ընտրությունների արդյունքները փո-

listes d'électeurs et de votants sont gardées secrètes ne permettant aucun contrôle malgré les demandes de l'opposition et les dénonciations des associations européennes indépendantes qui ont suivi les élections. C'est notamment ce qui a permis de nombreuses fraudes aux dernières élections. Au moment de la publication des résultats, le système électronique de calcul est tombé en panne 30 ou 40 minutes. C'est à ce moment que les résultats des élections ont été truqués.

M-S : *Quel est le rôle de l'Europe dans ce processus ?*
ZP : Les observateurs européens des élections se sont tus. J'ai des contacts avec eux depuis quelques années. Par ses félicitations adressées à Serge Sargsyan pour les élections, l'Europe a accepté qu'il reste au pouvoir malgré les malversations. La complaisance à Sargsyan est liée à la protection qu'alloue le régime actuel aux intérêts européens, américains et russes en Arménie.

M-S : *La vie associative et la société civile ont-elles les moyens d'influencer la situation ?*
ZP : Il existe des associations qui se mobilisent sur les questions de vie publique. Il existe aussi de plus en plus de mouvements spontanés de contestation comme actuellement celui sur l'augmentation du prix des transports. Cette décision est illégale car elle n'a pas été prise dans les règles par les autorités habilitées. J'ai essayé de déposer plainte pour illégalité contre cette décision. Les autorités de police ont refusé de transmettre cette plainte évoquant leur position de neutralité ! Selon la police, le Maire ayant suspendu sa décision d'augmentation, il n'y a pas nécessité de faire un procès. Il est évident qu'une fois de plus il est de nouveau impossible de faire reconnaitre cette illégalité majeure.

Z. Postanjian : ardente militante et toujours au premier rang lors de différents combats
Զ. Փոստանջյան. անխոջ մարտնչող և միշտ առաջին շարքերում՝ տարբեր պայքարների ժամանակ

Photos : www.a1plus.am

M-S : *Quelle est la place des femmes dans la société et dans la politique en Arménie ?*
ZP : Les femmes jouent leur rôle mais il n'est pas assez pesant. Je suis sûre que s'il y ait plus de femmes en politique en Arménie, l'ambiance dans le pays serait différente. Le fait que les femmes donnent priorité à leur vie familiale n'est pas le principal obstacle à leur investissement. La société arménienne est très patriarcale et machiste et leur laisse peu de place. Pourtant, dans les manifestations sur le prix des transports nous avons vu beaucoup de filles actives. Sur le plan démographique, il naît plus de garçons que de filles en Arménie. Mais l'émigration touche beaucoup plus les hommes que les femmes. La volonté d'éviter le service militaire en est une des raisons. De plus, de nos jours, en Arménie, le niveau d'éducation des filles est plus élevé que celui des garçons. Il y a, par exemple, plus de journalistes femmes qu'hommes. Les hommes sont aussi plus coincés dans leur carrière et projets que les femmes qui sont moins

փոխելու համար վերջինս օգտագործեց ժողովրդագրական շատ ցածր ցուցանիշ ունեցող գյուղական բնակավայրերը: Նա օգտագործել է բացակա ընտրողների ձայները: Արտագաղթից ամենից շատ տուժած Գեղարքունիքի մարզում մասնակցության ցուցանիշը որոշ ընտրական տեղամասերում մոտ էր 100%, որը գործնականում անհնար է: Ընտրողների քանակը որոշ ընտրատեղամասերում գերազանցում էր վերջիններիս գրանցելու տեխնիկական հնարավորությունները. ամեն 30 վայրկյանում հնարավոր չէ ունենալ մեկ ընտրող:

Հայաստանը հնարավորություն չի տալիս արտասահմանում գտնվողներին տվյալ երկրի դեսպանատներում և հյուպատոսարաններում ընտրելու: Հեռակա ընտրություններին մասնակցելը միայն հայ դիվանագետների ու նրանց ընտանիքի անդամների մենաշնորհն է: Լիազորագրերով ընտրելը նույնպես գործնականում գոյություն չունի: Ընտրողների և ընտրություններին մասնակցողների ցուցակները պահվում են գաղտնի և հնարավորություն չեն տալիս իրականացնելու որևէ ստուգում, չնայած ընդդիմության և ընտրակարգին հետևող եվրոպական անկախ կազմակերպությունների բացահայտումներին: Ահա հատկապես սա էր, որ վերջին ընտրությունների ժամանակ հնարավորություն տվեց կատարել բազմաթիվ կեղծիքներ: Ընտրատեղամասերի հրապարակման ժամանակ հաշվարկների էլեկտրոնա-յին համակարգը 30-40 րոպե շարքից դուրս եկավ: Ահա այս ժամանակ էլ ընտրությունների արդյունքները կեղծվեցին:

Մ-Ս. *– Ո՞րն է Եվրոպայի դերն այս պրոցեսում:*

Զ. Փ. – Ընտրությունների եվրոպական դիտորդները լռեցին: Արդեն մի քանի տարի է, ինչ ես շփման մեջ եմ նրանց հետ: Ընտրություններից հետո Սերժ Սարգսյանին հղած իր շնորհավորանքներով Եվրոպան ընդունեց, որ նա մնա իշխանության ղեկին՝ չնայած տեղի ունեցած լուրջ խախտումներին: Սարգսյանի հանդեպ սիրալիրությունը կապված է այն օժանդակության հետ, որը ներկա վարչակարգը ցուցաբերում է Հայաստանում եվրոպական, ամերիկյան և ռուսական շահերին:

Մ-Ս. *– Հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական հասարակությունը ունե՞ն, արդյոք, ներազդելու միջոցներ:*

Զ. Փ. – Կան հասարակական միություններ, որոնք իրենց ուժերը կենտրոնացնում են հանրային կյանքի խնդիրների վրա: Կան նաև բողոքի ինքնաբուխ շարժումներ, որոնց թիվը գնալով աճում է, ինչպիսին ներկա շարժումն է՝ տրանսպորտի գների թանկացման շուրջ: Այդ որոշումն անօրինական է, քանի որ այն իրավասու մարմինները չեն կայացրել ընդունված կարգի շրջանակներում: Ես փորձեցի այդ ապօրինի որոշման դեմ բողոք ներկայացնել: Ոստիկանությունը հրաժարվեց փոխանցել այն՝ նշելով իր դիրքորոշման ... չեզոքությունը: Ըստ ոստիկանության, քանի որ քաղաքապետը կասեցրել է գների բարձրացման իր որոշումը, այլևս դատական գործ հարուցելու անհրաժեշտություն չկա: Ակնհայտ է, որ մեկ անգամ ևս անհնար էր ստիպել ընդունել այս մեծ անօրինականության փաստը:

Մ-Ս. *– Ո՞րն է կանանց դերը Հայաստանի հասարակական և քաղաքական կյանքում:*

Զ. Փ. – Կանայք ունեն իրենց դերակատարությունը, բայց ոչ բավարար չափով: Վստահ եմ, որ եթե Հայաստանի քաղաքական կյանքում ավելի շատ կանայք ներգրավված լինեին, երկրի վիճակն ուրիշ կլիներ: Այն փաստը, որ կանայք առաջնային են համարում իրենց ընտանեկան կյանքը, չի հանդիսանում նրանց ներգրավվածության գլխավոր խոչընդոտը: Հայաստանի հասարակությունը շատ պահպանողական է և այրիշխանական, և քիչ տեղ է հատկացնում կանանց: Մինչդեռ տրանսպորտի գների հետ կապված ցույցերի ժամանակ մենք տեսանք շատ ակտիվ երիտասարդ աղջիկների: Ժողովրդագրական առումով Հայաստանում ծնվում են ավելի շատ տղաներ, քան աղջիկներ: Բայց արտագաղթն ավելի շատ ներառում է տղամարդկանց, քան թե կա-

claniques. Les femmes du Parti républicain sont plus conscientes que les hommes de la gravité de la situation en Arménie. Il y a également moins de corruption chez les femmes que chez les hommes.

M-S : *Qu'est-ce que vous attendez de la diaspora constituée suite à l'émigration postsoviétique ?*
ZP : Il faut qu'elle prenne conscience qu'elle est maître de la situation en Arménie. C'est en réclamant et exerçant ses droits en Arménie qu'elle peut peser sur la situation. Des groupes sont en train de se constituer dans la diaspora française pour exercer certaines actions. Pourquoi ne réclame-t-elle pas, par exemple, à la Cour Constitutionnelle son droit de vote de l'étranger aux élections arméniennes, comme cela se pratique pour de nombreux pays démocratiques ? Même si la réponse risque fortement d'être négative, c'est une forme de combat qui mérite d'être mené jusqu'à sa fin et servira un jour.

Il faut savoir pousser les choses jusqu'au bout pour mettre les autorités face à leurs responsabilités. J'ai souvent mis en pratique cette tactique. Je sais que beaucoup ont peur des conséquences de telles actions pour leurs familles restées au pays. C'est juste une question de courage. J'ai quatre filles, j'ai souvent été menacée et mon frère a fait l'objet d'un emprisonnement arbitraire de trois mois et a perdu son emploi. Il a été amnistié pour éviter un procès qui aurait démontré l'absence de fondement des faits qui lui étaient reprochés. Face à cette impossibilité d'obtenir la justice en Arménie, un recours a été adressé à la Cour européenne des droits de l'homme. Il n'est pas facile pour ma famille de supporter cette pression mais la volonté de justice est plus forte.

Pudique, Zarouhi Postandjian reconnait qu'il est très difficile de concilier la vie de famille et le combat politique et que parfois 24 heures ne suffisent pas pour tout faire. Mais l'admiration que nous avons pu voir dans les yeux de ses proches à la fin de notre entretien, auquel ils ont assisté, nous a tout à fait rassurés sur le fait que son investissement politique actif ne s'est nullement répercuté sur l'amour et le soutien des siens.

Gazette *Ma-Sis*
31 juillet 2013, Erevan

SEULS LES ARMÉNIENS POURRONT CHANGER LEUR PAYS

(Interview avec le premier Ministre de l'environnement de l'Arménie indépendante Karine Danielyan)

Madame Karine Danielyan a été Ministre de l'environnement (1991-1994) dans le premier gouvernement de l'Arménie indépendante dirigée par Lévon Ter-Petrossian. Elle a été un des fondateurs du mouvement écologiste national. Elle est docteur en biologie et en géographie, auteure de plus de 260 productions scientifiques. À l'heure actuelle, K. Danielyan enseigne à l'Université pédagogique d'Erevan en qualité de Professeur et dirige la chaire de l'écologie et du développement durable.

Nous sommes allés demander à Madame Danielyan comment était traitée la question de la protection de l'environnement en Arménie d'aujourd'hui.

Ma-Sis : Madame Danielyan, il y a quelques jours nous étions dans la région de Lori et avons visité le *Dendropark*. Comment peut-on oublier une telle richesse?
Karine Danielyan : La chute de l'URSS a été un véritable choc pour l'Arménie. Comme pour de nombreux pays peu développés, ses richesses ont été exploitées par des pays plus riches. Lors de l'indépendance, le pays a perdu toutes ses ressources industrielles. Ne sont restées que les ressources naturelles du sous-sol, des forêts… À la suite des différentes crises subies en Arménie, la situation socio-économique s'est dégradée et la société s'est polarisée. Un groupe

նանց: Զինվորական ծառայությունից խուսափելը այդ պատճառներից ևս մեկն է: Բացի այդ, այսօրվա Հայաստանում աղջիկների կրթական մակարդակն ավելի բարձր է, քան տղաներինը: Օրինակ, կին լրագրողներն ավելի շատ են, քան տղամարդիկ: Տղամարդիկ նաև ավելի շատ են կաշկանդված իրենց կարիերայի և ծրագրերի հարցերում, քան կանայք, ովքեր ավելի քիչ են կլանների մաս կազմում: Հանրապետական կուսակցության կին ներկայացուցիչները տղամարդկանցից ավելի շատ են գիտակցում Հայաստանի իրավիճակի լրջությունը: Կաշառակերությունը նույնպես ավելի քիչ տարածված է կանանց, քան տղամարդկանց շրջանում:

Մ-Ս. *– Ի՞նչ եք դուք ակնկալում հետխորհրդային շրջանի արտագաղթից ձևավորված սփյուռքից:*

Զ. Փ. – Հարկավոր է գիտակցել, որ Սփյուռքը Հայաստանի իրավիճակի տերն է: Միայն Հայաստանում պահանջելով և իրագործելով իր իրավունքները, նա կարող է իր ազդեցությունն ունենալ իրավիճակի վրա: Ֆրանսիական սփյուռքում սկսվել են ձևավորվել տարբեր խմբեր՝ որոշակի գործողություններ իրագործելու համար: Ինչո՞ւ, օրինակ, Սփյուռքը Սահմանադրական դատարանում չի պահանջում հայաստանյան ընտրությունների ժամանակ իր արտասահմանում ընտրելու իրավունքը, որն ընդունված է բազմաթիվ ժողովրդավարական երկրներում: Անգամ խիստ հավանական բացասական պատասխանի դեպքում դա կդիտվի որպես պայքարի մի ձև, որը պետք է ավարտին հասցնել և որը մի օր ինչ-որ կարևոր նպատակի կծառայի:

Պետք է կարողանալ գործընթացները մինչև վերջ հասցնել, որը իշխանությանը կկանգնեցնի իր պարտականությունները կատարելու փաստի առջև: Ես շատ հաճախ եմ կիրառել այս մարտավարությունը: Գիտեմ, որ շատերը վախենում են Հայաստանում մնացած իրենց ընտանիքների հանդեպ նմանատիպ գործողությունների հետևանքներից: Այստեղ միայն համարձակության հարց է: Ես չորս աղջիկ ունեմ, ինձ հաճախ են սպառնացել և իմ եղբայրը երեքամսյա կամայական բանտարկության էր ենթարկվել՝ կորցնելով իր աշխատանքը: Նա համաներվել է, որպեսզի դատավարություն տեղի չունենա, ինչը ցույց կտար իրեն վերագրվող հիմնավոր փաստերի բացակայությունը: Ելնելով Հայաստանում արդարությանը հասնելու անհնարինությունից՝ մենք դիմել ենք Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Իմ ընտանիքի համար հեշտ չէ հանդուրժել այս ճնշումները, բայց արդարությանը հասնելու ցանկությունը շատ ավելի ուժեղ է:

Զարուհի Փոստանջյանը ողջամտորեն ընդունում է, որ շատ դժվար է համատեղել ընտանեկան կյանքն ու քաղաքական պայքարը և որ երբեմն 24 ժամը բավարար չէ ամեն ինչ հասցնելու համար: Բայց այն հիացմունքը, որ հարցազրույցի վերջում մենք տեսանք նրա հարազատների աչքերում, ովքեր ներկա էին մեր հարցազրույցին, մեզ հավաստիացրեց այն բանում, որ նրա ակտիվ քաղաքական գործունեությունը որևէ կերպ չի անդրադարձել նրա հարազատների սիրո և աջակցության վրա:

«Մա-Սիս» թերթ
31 Հուլիսի 2013 թ., ք. Երևան

Photo : www.newsarmenia.ru

Karine Danielyan, un des fondateurs du mouvement écologiste national
Կարինե Դանիելյան. բնապահպանների ազգային շարժման հիմնադիրներից մեկը

d'oligarques possède aujourd'hui toutes les ressources et les exportent. Ils sont au-delà des lois et tous au Parlement. La classe moyenne a migré et le reste de la population arménienne appauvrie vit aussi en exploitant la nature.

M-S : Y-a-t-il des actions entreprises pour défendre l'environnement ?
KD : Des programmes existent mais trop peu se réalisent. L'Arménie indépendante n'existe que depuis 22 ans, il faut donc être indulgent. Il faut apprécier les erreurs en tenant compte des profonds changements sociopolitiques et écologiques vécus. J'ai beaucoup d'espoir en la jeunesse. Les jeunes sont fortement mobilisés et n'hésitent pas à manifester sans être structurés en association. Ils collaborent avec l'ONG dont je suis Présidente intitulée *Pour un développement humain durable*. C'est une association arménienne inscrite et soutenue par l'Organisation des Nations unies. Seuls des Arméniens peuvent en être membres.

M-S : Quels sont ses principaux projets ?
KD : Un travail est entrepris avec des universités, des manuels et documentations sont édités. L'action est locale et internationale. J'ai participé à la Conférence sur le Développement durable à Rio de Janeiro dite « Rio+20 ». J'ai impulsé la création d'une commission mixte entre des membres du gouvernement actuel et des représentants du milieu associatif pour aider à la réalisation des actions nécessaires pour atteindre les objectifs de développement durable fixés par le sommet de Rio pour 2020. J'assure bénévolement le secrétariat de cette instance sur proposition du ministre de l'environnement. C'est à la fois une reconnaissance de l'action insistante que j'entreprends régulièrement pour des causes écologiques. C'est également une manière de m'impliquer si les actions n'aboutissent pas. Ma position n'est pas confortable. Elle m'est parfois reprochée par des jeunes ou des membres d'autres associations écologiques. Mais je considère que le peu que je peux obtenir des autorités de cette manière est à prendre.

La présentation réalisée à Rio de la situation en Arménie est co-construite entre l'État et les associations. Au départ, l'État voulait présenter une vision très optimiste de la situation très loin de la réalité. Si elle avait été maintenue, les associations auraient présenté elles-mêmes un contre-rapport. Après concertation, la version et les propositions présentées sont désormais réalistes. Cela me donne un peu d'espoir pour que les choses changent par le bas et le haut de la société. Ainsi, une cascade, magnifique atout en matière de paysage et de tourisme, a été menacée de disparition dans la région de Lori dans le cadre d'un projet de barrage. Des jeunes se sont physiquement et durablement opposés au chantier, se plaçant devant les engins de travaux publics. Des discussions ont été menées dans le

ՄԻԱՅՆ ՀԱՅԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՎԵՐԱՓՈԽԵԼ ԻՐԵՆՑ ԵՐԿԻՐԸ

(Հարցազրույց անկախ Հայաստանի առաջին Բնապահպանության նախարար Կարինե Դանիելյանի հետ)

Տիկին Կարինե Դանիելյանը Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորած անկախ Հայաստանի առաջին կառավարության կազմում Բնապահպանության նախարարն էր (1991-1994), բնապահպանների ազգային շարժման հիմնադիրներից մեկն է: Նա կենսաբանական և աշխարհագրական գիտությունների դոկտոր է, ավելի քան 260 գիտական աշխատությունների հեղինակ, դասավանդում է Երևանի մանկավարժական համալսարանում՝ որպես պրոֆեսոր և ղեկավարում է էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնը:

Մենք հանդիպեցինք տիկին Դանիելյանին՝ տեղեկանալու համար, թե Հայաստանում այսօր ինչպե՞ս են լուծվում շրջակա միջավայրի պաշտպանության խնդիրները:

Մա-Սիս. – *Տիկի՛ն Դանիելյան, մի քանի օր առաջ մենք Լոռիում էինք և այցելեցինք Դենդրոպարկ: Ինչպե՞ս կարելի է մոռացության մատնել այսպիսի հարստությունը:*
Կարինե Դանիելյան – ԽՍՀՄ-ի փլուզումը Հայաստանի համար իսկական ցնցում էր: Ինչպես բազմաթիվ այլ ոչ շատ զարգացած երկրներում, տեղական հարստությունները շահագործում են ավելի հարուստ երկրները: Անկախանալու հետ երկիրը կորցրեց բոլոր արդյունաբերական ռեսուրսները: Մնացին միայն բնական ռեսուրսները՝ ընդերքը, անտառները… Տարբեր ճգնաժամերի հետևանքով երկրում սոցիալ-տնտեսական վիճակը վատթարացավ, իսկ հասարակությունը բևեռացվեց: Այսօր բոլոր ռեսուրսները գտնվում են մի խումբ օլիգարխների ձեռքերում, ովքեր դրանք արտահանում են: Նրանք իրենց օրենքից բարձր են դասում, և բոլորն էլ գտնվոմ են Խորհրդարանում: Միջին դասն արտագաղթել է, և Հայաստանում մնացած բնակչության աղքատացած մասը նույնպես ապրում է բնությունը շահագործելով:

Մ-Ս. – *Ինչպիսի՞ նախաձեռնություններ կան շրջակա միջավայրի պաշպանության գործում:*
Կ. Դ. – Ծրագրեր կան, բայց գրեթե չեն իրականացվում: Անկախ Հայաստանն ընդամենը 22 տարեկան է, ուստի մոտեցումը պետք է լինի ըմբռնումով: Սխալներից պետք է դասեր քաղել՝ հաշվի առնելով վերապրած սոցիալ-քաղաքական և էկոլոգիական խոր փոփոխությունները: Ես մեծ հույսեր եմ կապում երիտասարդության հետ: Նրանք կարողանում են համախմբել իրենց ուժերը և չեն վարանում հրապարակայնորեն հանդես գալ՝ համախմբված չլինելով որևէ հասարակական կազմակերպության մեջ: Նրանք համագործակցում են ոչ կառավարական կազմակերպությունների, այդ թվում նաև իմ ղեկավարած «Հանուն կայուն մարդկային զարգացման» կազմակերպության հետ: Այս հայկական կազմակերպությունը գրանցված է և աջակցություն է ստանում ՄԱԿ-ի կողմից: Միայն հայերը կարող են նրան անդամակցել:

Մ-Ս. – *Որո՞նք են կազմակերպության հիմնական ծրագրերը:*
Կ. Դ. – Աշխատում ենք համալսարանների հետ, հրատարակում ենք դասագրքեր և գիտական նյութեր: Գործում ենք ինչպես տեղական, այնպես էլ միջազգային ասպարեզներում: Ռիո դե Ժանեյրոյում մասնակցել եմ «Ռիո+20» կոչվող կոնֆերանսին, որը նվիրված էր կայուն զարգացմանը: Իմ նախաձեռնությամբ և կառավարության ներկայիս անդամների, տարբեր ընկերակցությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծվել է համատեղ հանձնաժողով, որը պետք է օգնի իրականացնել այն բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որոնք թույլ կտան իրագործել կայուն զարգացման Ռիոյի գագաթնաժողովում ամրագրված նպատակները՝ մինչև 2020 թ.: Բնապահպանության նախարարի առաջարկությամբ ես, կամավոր հիմունքներով, ստանձնել եմ այդ մարմնի քարտուղարությունը: Սա բնապահպանության գործում իմ պարբերական և հետևողական աշխատանքի դրսևորումն է: Սա նաև մի տարբերակ է, որն ինձ հնարավորու-

cadre de la commission mixte de développement durable. Des représentants des jeunes ont posé des questions au ministre de l'environnement et au premier ministre. Ce dernier avait reçu deux rapports de deux ministères qui affirmaient que la cascade ne serait pas touchée par les travaux. Après d'âpres discussions et la diffusion au premier ministre d'images montrant la beauté du site, celui-ci a changé de position et cette cascade a ainsi été protégée. Mais cela représente beaucoup d'énergie.

La chute de Trtchkan (région de Lori) Թռչկանի ջրվեժը (Լոռվա մարզ)

M-S : Avez-vous d'autres exemples ?

KD : Des territoires sont à protéger en Arménie. Après la disparition de leur gestionnaire, certains ont beaucoup souffert. Les mouvements de jeunes cherchent à protéger certains sites comme la forêt de Khosrov, la réserve naturelle de Shikahogh près de Kapan menacée par la construction de l'autoroute Nord-Sud, les forêts de platanes de la réserve de *Zanguézour* dans la région de Syounik, près de la frontière azérie… C'est une lutte permanente. De nos jours, une cinquantaine d'associations et d'organisations existent en Arménie pour la défense de l'environnement, par exemple en matière de gestion des déchets.

M-S : Il faudrait pouvoir convaincre le premier ministre de l'intérêt de donner des moyens de développement pour *Dendropark*. De petites choses pourraient être mises en place et seraient de nature à changer la situation comme faire travailler des étudiants sur le recensement des espèces présentes dans le parc, sur des parcours de visite commentés, sur des produits dérivés dont la recette devrait être réinvestie sur le parc et non revenir au ministère concerné.

KD : Je pourrais vous aider à rencontrer l'adjoint du ministre de l'environnement pour une telle démarche, mais il faudrait qu'elle soit beaucoup plus construite. Certains combats sont plus difficiles que d'autres.

Photos : Garik Galstyan

Karine Danielyan à Lille à l'occasion de l'Assemblée mondiale des Citoyens, décembre 2001
Կարինե Դանիելյանը Լիլում՝ Քաղաքացիների համաշխարհային համագումարի առթիվ, դեկտեմբեր 2001

M-S : Vous pensez à la situation de la préservation du vieil Erevan ?

KD : La préservation du patrimoine historique bâti du vieil Erevan est en effet très délicate face aux appétits des promoteurs immobiliers proches du pouvoir. La vision politique actuelle de cette préservation est minimaliste et aucune intervention n'aboutit pour l'instant. Beaucoup de bâtiments d'importance ont disparu. Aucun entretien n'est mené pour réhabiliter les immeubles restants pour lesquels il est facile ensuite d'invoquer l'état de délabrement pour en justifier la destruction. C'est l'âme historique du pays qui disparait.

M-S : À l'heure actuelle, quels autres problèmes se posent encore à vous ?

KD : Un autre problème me soucie actuellement. Il s'agit du trans-

թյուն է տալիս միջամտել այն ժամանակ, երբ իրականացվող գործողությունները չեն հասնում իրենց նպատակին: Իմ կարգավիճակը հարմարավետ չէ: Երբեմն երիտասարդները կամ էլ բնապահպանական տարբեր միությունների անդամներ քննադատում են ինձ, սակայն գտնում եմ, որ իշխանությունների հետ շփվելիս պետք է օգտագործվեն բոլոր միջոցները, որոնք հնարավորություն են տալիս անգամ համեստ արդյունքների հասնել:

Ռիոյում Հայաստանի իրավիճակը ներկայացվեց պետության և հասարակական կազմակերպությունների փոխհամաձայնեցված զեկույցի տարբերակը: Սկզբում պետական իշխանությունները ցանկանում էին իրավիճակը ներկայացնել խիստ լավատեսորեն, որն իրականությունից շատ էր հեռու: Եթե այդ տարբերակն անցներ, ապա հասարակական կազմակերպությունները պետք է ներկայացնեին իրենց այլընտրանքային զեկույցը: Համատեղ խորհրդակցությունից հետո ներկայացված տարբերակն ու առաջարկություններն արդեն իրատեսական էին: Սա հույս է ներշնչում, որ հասարակությունը կարող է փոխվել թե՛ ներքևից և թե՛ վերևից: Օրինակ՝ Լոռվա մարզում մի ամբարտակի նախագծման արդյունքում կարող էր անհետանալ մի հիասքանչ ջրվեժ, որը թե՛ իր բնապատկերով և թե՛ զբոսաշրջության նկատառումներով շատ կարևոր է: Երիտասարդները ֆիզիկապես և հետևողականորեն խոչընդոտեցին շինարարական աշխատանքների ընթացքին՝ խափանելով շինտեխնիկայի աշխատանքը: Կայուն զարգացման համատեղ հանձնաժողովում սկսվեցին քննարկումներ: Երիտասարդների ներկայացուցիչներն իրենց հարցերն ուղղեցին բնապահպանության նախարարին և վարչապետին, որն ստացել էր երկու նախարարությունների հաշվետվությունները, որոնք վստահեցնում էին, թե շինարարական աշխատանքների հետևանքով ջրվեժը չի տուժի: Սուր քննարկումներից և վարչապետին տեղանքի գեղեցկությունը փաստող նկարների ցուցադրումից հետո, նա փոխեց իր դիրքորոշումը, և ջրվեժն այսպիսով պաշտպանվեց: Այս ամենը շատ էներգիա է պահանջում:

Մ-Ս. – *Ունե՞ք ուրիշ օրինակներ:*

Կ. Դ. – Հայաստանում կան տարածքներ, որոնք պահպանման կարիք ունեն: Նրանց մի մասը շատ է տուժել՝ ղեկավարող մարմնի վերացման հետևանքով: Երիտասարդական շարժումներն աշխատում են պահպանել որոշ բնական տեսարժան վայրեր, ինչպես, օրինակ, Խոսրովի անտառը, Կապանի մոտակայքում գտնվող և Հյուսիս-Հարավ մայրուղու շինարարական աշխատանքների պատճառով վտանգված շիկահողերը, ադրբեջանական սահմանին հարակից Սյունիքի մարզի «Զանգեզուր» արգելոցի չինարի անտառները և այլն: Դա մշտական պայքար է: Այսօր Հայաստանում գոյություն ունեն շրջակա միջավայրի պահպանման հարցերով զբաղվող մոտ հիսուն ընկերություններ ու կազմակերպություններ, ինչպես, օրինակ, աղբի վերամշակման հարցով զբաղվող կազմակերպությունները:

Մ-Ս. – *Հարկավոր է վարչապետին համոզել, որ Դենդրոպարկի զարգացման համար միջոցների տրամադրումն օգտակար նախաձեռնություն է: Կարելի է սկսել ամենահամեստ գործերից, որոնք հնարավորություն կտան փոխել իրավիճակը: Օրինակ՝ կարելի է հորդորել ուսանողներին աշխատել այգում ներկայացված բույսերի տեսակների հաշվառման, բացատրական էքսկուրսիաների, թեմատիկ հուշանվերների, ապրանքների վաճառքի կազմակերպման և իրացման գործում, որից ստացած շահույթն այնուհետև կներդրվի այգու զարգացման գործի մեջ, այլ և ոչ թե կուղարկվի համապատասխան նախարարություն:*

Կ. Դ. – Այս հարցում ես կարող եմ ձեզ օգնել հանդիպելու բնապահպանության նախարարի տեղակալի հետ, սակայն պետք է նախօրոք մշակել գործողությունների հստակ ծրագիր: Պայքարի ձևերի դժվարությունները տարբեր են:

Մ-Ս. – *Դուք նկատի ունեք հին Երևանի պահպանության խնդի՞րը:*

Կ. Դ. – Հին Երևանում կառուցված պատմական ժառանգության պահպանությունը, իրոք, շատ նուրբ խնդիր է՝ հաշվի առնելով անշարժ գույքի իշխանամետ գործակալությունների ախորժակը: Ներկայիս քաղաքական տեսադաշտում այդ պահպանման հարցը նվազագույն նշանակություն ունի, և մինչև օրս ոչ մի միջամը-

fert de la représentation locale de l'ONU de Bratislava (Slovaquie) à Istanbul. La Turquie offre beaucoup de moyens à l'ONU (des locaux, *etc.*) pour obtenir cette délocalisation. Tout cela entre dans sa politique de faire de la Turquie un pôle d'attraction pour 2015. Plusieurs lettres ont été adressées par les ONG à l'ONU sur cette difficulté importante pour les Arméniens. Elles sont restées sans résultat, même après les heurts qui se sont produits en Turquie avec les partis d'opposition.

M-S : Quelles relations avez-vous avec l'Union européenne dans le domaine de l'environnement ?

KD : Des programmes d'actions existent dans de nombreux domaines dont celui de la protection de l'environnement et du développement durable. L'Europe contrôle la réalisation de ces programmes mais avec des questionnaires bien trop imprécis donnant une image fausse du niveau de réalisation des opérations. De nouveaux questionnaires plus fouillés sont en cours d'élaboration. L'Europe devrait être beaucoup plus dure et exigeante en matière de résultats. Il en est de même pour le contrôle des élections en Arménie. Je crois que seuls les Arméniens pourront changer leur pays. Les jeunes investis dans la cause écologiste sont ainsi parfois très radicaux dans leur lutte.

J'avoue être parfois bien fatiguée et déçue de ces combats qui demandent tant d'énergie. La migration prive l'Arménie d'une société civile forte et active. La population qui reste se désespère, se décourage vite. Une commission sur l'écologie a été mise en place avec le Maire d'Erevan, de nombreux bénévoles se sont beaucoup investis pour un résultat nul. Beaucoup ont alors renoncé à poursuivre ce travail. La diaspora apporte un grand soutien aux associations et permet de petites avancées. Mais face au gouvernement elle doit aussi dire la vérité et dénoncer ce qui ne va pas.

Gazette *Ma-Sis*
Août 2013, Erevan

DENDROPARK : UNE PERLE CACHÉE D'ARMÉNIE

Stepanavan est une petite ville du Nord de l'Arménie de 14 300 habitants en 1985, 12 500 habitants aujourd'hui (2011). Le séisme de 1988 est passé par là et l'émigration a fait le reste. La région est pourtant magnifique. Très agricole, elle comporte aussi d'épaisses forêts qui couvrent ses montagnes. Comme partout, la pauvreté est importante et les équipements publics sommaires et mal entretenus. Quelques hôtels subsistent cependant encore, vestige du passé balnéaire du district. Parmi ceux-ci l'hôtel « Sotchout » (Pinède) récemment rénové, avec ses chambres tout confort et pension complète, situé aux portes du parc botanique *Dendropark*.

À 12 kilomètres de Stepanavan, à 1550 mètres au-dessus du niveau de la mer, sur la pente nord-ouest du mont Argasar, c'est un

տություն չի հասել իր նպատակին: Շատ կարևոր շինություններ վերացել են, իսկ մյուս կառույցներում ոչ մի վերականգնողական աշխատանք չի կատարվում: Նրանց խարխուլ վիճակը հետագայում հեշտացնում է քանդման նպատակահարմարությունը: Այսպիսով երկրի պատմական հոգին է վերանում:

Մ-Ս. – *Ներկայումս ուրիշ ի՞նչ խնդիրներ են Ձեր առջև ծառացած:*

Կ. Դ. – Ներկա պահին մեզ մի ուրիշ խնդիր է անհանգստացնում: Խոսքը ՄԱԿ-ի ներկայացուցիչների նստավայրը Բրատիսլավայից (Սլովակիա)՝ Ստամբուլ փոխադրման մասին է: Թուրքիան ՄԱԿ-ին մեծ միջոցներ է տրամադրում (տարածքներ և այլն)՝ այս տեղափոխությունն իրականացնելու համար: Այս ամենն արվում է 2015 թ. Թուրքիան ավելի գրավիչ դարձնելու քաղաքականության շրջանակներում: Ոչ կառավարական կազմակերպությունները բազմաթիվ նամակներ են հղել ՄԱԿ՝ հայերի համար այս կարևոր հարցի վերաբերյալ: Նամակները մնացել են անպատասխան, նույնիսկ Թուրքիայում ընդդիմադիրների հետ ունեցած բախումներից հետո:

Մ-Ս. – *Ինչպիսի՞ն են Եվրոմիության հետ հարաբերությունները բնապահպանության ոլորտում:*

Կ. Դ. – Կան գործողությունների բազմաթիվ ծրագրեր, այդ թվում՝ նաև բնության պաշտպանության և կայուն զարգացման ծրագրեր: Եվրոպան վերահսկում է դրանց իրականացման գործընթացը, բայց ոչ հստակ ձևակերպված հարցաթերթիկների միջոցով: Արդյունքում կեղծ պատկեր է ստեղծվում իրականացված աշխատանքների ծավալի մասին: Նոր՝ ավելի կատարելագործված հարցաթերթիկների մշակումն ընթացքի մեջ է: Արդյունքների վերահսկման հարցում Եվրոպան պետք է ավելի խիստ ու պահանջկոտ լինի: Սա վերաբերում է նաև Հայաստանում տեղի ունեցող ընտրություններին: Իմ կարծիքով, միայն հայերը կարող են վերափոխել իրենց երկիրը: Բնապահպանության գործում ներգրավված երիտասարդների պայքարն այսպիսով երբեմն ծայրահեղ է դառնում:

Խոստովանեմ, որ լինում են պահեր, երբ այդքան ջանքեր պահանջող պայքարից հետո հոգնում և հիասթափվում եմ: Արտագաղթը զրկում է Հայաստանին ուժեղ և ակտիվ հասարակություն ունենալու հնարավորությունից: Երկրում մնացած բնակչությունը հիասթափվում է, շուտ հուսահատվում: Երևանի քաղաքապետի մասնակցությամբ սկսել էր գործել բնապահպանական հանձնաժողովը. բազմաթիվ կամավորներ ջանք ու եռանդ չխնայեցին, բայց՝ անարդյունք: Շատերն այսպիսով հրաժարվեցին սկսած աշխատանքը շարունակելուց: Սփյուռքը մեծ աջակցություն է ցույց տալիս հայաստանյան հասարակական կազմակերպություններին: Դա հնարավորություն է տալիս արձանագրելու որոշ փոքր առաջխաղացումներ, սակայն Սփյուռքը պետք է նաև կառավարությանն ասի ճշմարտությունը՝ մատնացույց անելով սխալներն ու վրիպումները:

«Մա-Սիս» թերթ, Օգոստոս 2013 թ., ք. Երևան

ԴԵՆԴՐՈՊԱՐԿ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՔՆՎԱԾ ՄԱՐԳԱՐԻՏԸ

Ստեփանավանը Հայաստանի հյուսիսում գտնվող փոքրր քաղաք է, որը 1985 թ. ուներ 14 300 բնակիչ, իսկ այսօր՝ 12 500 (2011 թ.): Բնակչության նվազման պատճառներն են 1988 թ. եր-

Photo: Garik Galstyan

endroit magique, baigné de ruisseaux et perdu au bout d'une route presque impraticable. Avant d'arriver au parc, vous passez devant l'église à une nef Tormak en ruine (environ à 2 km de distance du village de Gulagarak). Auparavant ici se situait le village Tormakadur disparu.

Des centaines d'espèces d'arbres de tous les continents (séquoia, pruche canadien, cèdre de l'Himalaya, érable du Japon, yucca, if commun, sapins, tilleuls…) ont été transférées du Jardin botanique d'Erevan et de plusieurs autres pays (Russie, Géorgie, Ukraine, Extrême-Orient, Allemagne, France, Portugal, Chine, États-Unis), et réunis là par un botaniste passionné Edmond Léonowicz. Ce Polonais est né en 1902 en Géorgie, dans la famille du comte Staszewicz-Léonowicz. Il a été diplômé de la faculté de sylviculture de l'Institut agricole de Tbilissi. Après ses études, il a été envoyé en Arménie. C'est en travaillant dans le comité des forêts en tant qu'ingénieur-pépiniériste qu'il a commencé à développer ce parc en partant de la forêt naturel du site et en ajoutant de nouveaux arbres et arbustes d'ornement. Le parc a ainsi été crée en 1931. Il a acquis le statut de réserve naturelle depuis 1958. E. Léonowicz l'a géré jusqu'en 1984 (mort en 1986). Son fils, Vitali Edmondovitch, a ensuite pris la relève et est toujours présent aujourd'hui à 76 ans.

Nous avons rencontré Vitali Edmondovitch, le directeur actuel du Dendropark et avons eu un court entretien avec lui concernant l'état actuel de cet endroit magnifique. Ce parc de 35 hectares avec plus de 500 espèces de végétaux est une propriété d'État depuis 1998 (« zone de préservation particulière ») sous la responsabilité du Ministère de l'écologie et de la protection de la nature. Son entrée est gratuite. Trois ouvrières s'occupent de ce jardin et produisent des végétaux, avec un mécanicien, trois gardiens, un dendrologue et le fils du créateur en retraite. La tâche est rude pour si peu de personnel. Les moyens manquent visiblement et cruellement, pourtant le parc est propre et bien organisé. Une tournée de ramassage des poubelles et déchets est organisée deux fois par semaine, ce qui n'est malheureusement pas le cas tout autour du parc le long de la rivière très prisée des touristes arméniens venant y faire des barbecues et se baigner en famille. Les touristes étrangers sont eux très rares.

Plus de la moitié du parc (17,5 hectares) est constituée de forêt naturelle avec ses arbres centenaires. Les arbres et buissons



Photo: Garik Galstyan

կրաշարժը ու նրան հաջորդած արտագաղթը: Չնայած դրան՝ սա հիասքանչ և հիմնականում գյուղատնտեսական շրջան է: Սարերն այստեղ ծածկված են խիտ անտառներով: Ինչպես ամենուր Հայաստանում, աղքատությունը բարձր ցուցանիշ ունի, իսկ պետական ենթակառույցները թույլ են զարգացած և վատ պահպանված: Սակայն առ այսօր գոյատևում են մի քանի հյուրանոցներ, որոնք նախկին շրջանային առողջարանային համալիրի մի մասն էին: Դրանց թվում է «Դենդրոպարկ» բուսաբանական այգու դիմաց գտնվող և վերջերս վերանորոգված «Սոճուտ» հյուրանոցը՝ հարմարավետ սենյակներով, ամբողջական սպասարկման փաթեթով:

Ստեփանավանից 12 կմ հեռավորության վրա՝ Արգասար լեռան հյուսիս-արևմտյան լանջին՝ ծովի մակարդակից 1550 մ բարձրության վրա գտնվող, առվակներով հարուստ հրաշալի վայրը գրեթե անանցանելի մի ճանապարհի վերջում է: Մինչև այգին հասնելը դուք անցնում եք V-VI դդ. Տորմակ կիսավեր միանավ եկեղեցու կողքով (Գյուլագարակ գյուղից մոտ 2 կմ հեռավորության վրա): Նախկինում այստեղ եղել է Տորմակադուռ ավերակ գյուղատեղին:

Բոլոր մայր ցամաքներից բերված հարյուրավոր ծառատեսակներ՝ մամոնտածառ (սեքվոյա), կանադական մոլախինդ, հիմալայան եղևնափայտ, ճապոնական թխկի, յուկկա, կենի (կարմրածառ), եղևնի, լորենի և այլն, այստեղ են բերվել Երևանի և մի շարք երկրների՝ Ռուսաստան, Վրաստան, Ուկրաինա, Հեռավոր Արևելք, Գերմանիա, Ֆրանսիա, Պորտուգալիա, Չինաստան, Միացյալ Նահանգներ, բուսաբանական այգիներից: Այդ ամենը Դենդրոպարկում է հավաքել իր գործի մեծ սիրահար, ազգությամբ լեհ բուսաբան Էդմոնդ Լեոնովիչը: Նա ծնվել է 1902 թ. Վրաստանում՝ կոմս Ստացևիչ-Լեոնովիչի ընտանիքում: Ավարտելով Թբիլիսիի Գյուղատնտեսական ինստիտուտի անտառագիտության ֆակուլտետը, գործուղվել է Հայաստան: Անտառային կոմիտեում աշխատելու տարիներին՝ 1931 թ. ի վեր, նա տեղի բնական անտառի հիման վրա տնկել է նոր ծառեր և զարդաբույսեր, սկսել է զարգացնել այս այգին, որը 1958 թ. ստացել է արգելոցի կարգավիճակ: Էդմոնդ Լեոնովիչն իր ստեղծած այգին ղեկավարել է մինչև 1984 թ. (մահացել է 1986 թ.): Նրա գործը շարունակել է որդին՝ Վիտալի Էդմոնդովիչը, ով, չնայած իր 76-ամյա տարիքին, այսօր էլ մշտապես ներկա է այգում:

Մենք հանդիպեցինք Դենդրոպարկի ներկայիս տնօրեն Վիտալի Էդմոնդովիչին և ունեցանք կաճատև հարցազրույց՝ հըրաշագեղ այգու այսօրվա վիճակի մասին: 35 հեկտար տարածքի

d'ornement importés et les plates bandes de fleurs, notamment des roses, occupent encore 15 hectares du parc. Du fait de son âge (80 ans), le parc peut être considéré comme un véritable laboratoire de sélection et d'adaptation de centaines d'espèces de plantes. En effet, le parc est situé dans une zone climatique froide (à 1550 mètres) et humide (550 mm de précipitation annuelle). De décembre à mars le territoire du parc est couvert de neige. Plus de 2500 espèces de plantes ont été expérimentées, mais seulement 500 ont pu s'adapter aux conditions climatiques rudes locales. L'étude de l'évolution du développement des plantes dans de nouvelles conditions climatiques de ce parc représente un grand intérêt scientifique.

Photos : Garik Galstyan

Les ruines de l'église Tormak (5^{e} – 6^{e} s.) Տորմակ եկեղեցու ավերակները (5-6 դդ.)

C'est le pin sibérien qui est devenu la « carte de visite » de cet espace verdoyant, car un sanatorium pour les enfants (« *Sotchout* ») souffrant de maladies pulmonaires y a été construit à l'époque soviétique vu les qualités exceptionnelles de ce pin. Du fait de son exploitation dans le parc, il a été recommandé de séjourner au sanatorium notamment pendant les mois d'avril et de mai quand le pin fleurit. Son aromate est justement bénéfique pour la santé et soigne les maladies respiratoires et allergies. À l'entrée du parc, des habitants vendent des confitures et du sirop de pommes de ce pin (« miel de pomme de pin »). Ce « miel » est un véritable baume très bénéfique pour les bronches.

Avec le temps, le territoire du parc a été agrandi, de nouvelles allées ont vu le jour qui marient les espèces sauvages et décoratives en donnant un charme particulier à cette initiative unique : dans la zone subalpine du Sud-Caucase c'est la première fois qu'une forêt naturelle a été remodelée en parc. Parmi d'autres espèces d'origine sauvage citons les variétés locales de noyer (*Juglans*), de peuplier (*Populus*), de pommier et poirier sauvage (*Malus sylvestris* et *Pyrus pyraster*).

Au centre du parc, à côté de l'allée principale, l'attention des visiteurs est attirée par cinq énormes séquoias de Californie (« cinq frères »). Ils sont encore très jeunes. Plantés très près l'un de l'autre, ils se toucheront un jour ou l'autre au cours de leur très longue vie. Trop tard aujourd'hui pour les séparer.

Photo : Garik Galstyan

Au sein même du parc : le tombeau du botaniste polonais Edmond Léonowicz (1902-1986), fondateur de Dendropark Դենդրոպարկի հիմնադիր լեհ բուսաբան Էդմոնդ Լեոնովիչի (1902-1986) գերեզմանն՝ այգու տարածքում

վրա փռված Դենդրոպարկը ներառում է ավելի քան 500 բուսատեսակ և 1988 թ. գտնվում է պետության պահպանության ներքո («Հատուկ պահպանման գոտի»)՝ Բնապահպանության և էկոլոգիայի նախարարության հսկողության տակ: Մուտքն անվճար է: Այգում աշխատում են երեք բանվորուհի, մեկ մեխանիկ, երեք պարտիզպան, մեկ դենդրոլոգ և հիմնադիրի թոշակառու որդին: Իսկ աշխատանքը բավական շատ է այս սակավաթիվ անձնակազմի համար: Միջոցների խիստ պակասը զգացվում է անզեն աչքերով: Չնայած դրան՝ այգին մաքուր է և լավ խնամված: Շաբաթը երկու անգամ նրա տարածքից հեռացվում են աղբն ու կենցաղային թափոնները: Ցավոք սրտի, պատկերը նույնը չէ այգու հարակից տարածքում գտնվող գետի ափերին՝ հայ զբոսաշրջիկների նախընտրելի վայրում, որտեղ գալիս են ընտանիքներով՝ խորոված անելու և լողանալու: Օտարերկրյա զբոսաշրջիկներն այստեղ հազվադեպ են լինում:

Այգու կեսից ավելին (17,5 հեկտար) զբաղեցնում է բնական անտառն՝ իր հարյուրամյա ծառերով: Դրսից բերված ծառերը, զարդաթփերն ու ծաղկուղիները, հատկապես՝ վարդի պուրակները, զբաղեցնում են մնացած 15 հեկտարը: Իր գոյատևման ութսուն տարիների ընթացքում այս վայրը դարձել է հարյուրավոր բուսատեսակների սելեկցիայի և ադապտացման իսկական լաբորատորիա: Իրականում այգին գտնվում է ցուրտ (1550 մետր բարձրության վրա) և խոնավ (550 մմ տարեկան տեղումներ) կլիմայական գոտում: Դեկտեմբերից մինչև մարտ այն պատված է ձյունով: Այգու գոյության ընթացքում ավելի քան 2500 բուսատեսակներ են փորձարկվել, սակայն միայն 500-ն են հարմարվել տեղի ծայրահեղ բնակլիմայական պայմաններին: Կլիմայական նոր պայմաններում բույսերի զարգացման էվոլյուցիայի ուսումնասիրությունը գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Այս կանաչապատ տարածքի այցեքարտը, հիրավի, դարձել է սիբիրյան սոճին: Հաշվի առնելով սոճու բացառիկ հատկությունները՝ թոքային հիվանդություններով տառապող երեխաների համար, խորհրդային տարիներին այստեղ կառուցվել է «Սոճուտ« առողջարանը: Քանի որ այս ծառատեսակը չափազանց տարածված է այգում, ապա խորհուրդ է տրվում առողջարանում հանգիստը անցկացնել հատկապես ապրիլ և մայիս ամիսներին, երբ սոճին ծաղկում է: Նրա բուրմունքը շատ բարենպաստ է ալերգիաներով և շնչառական ուղիներով տառապող հիվանդների առողջության համար: Այգու մուտքի մոտ տեղի բնակիչները վաճառում են մուրաբաներ և սոճու կոներից պատրաստված օշարակներ («սոճու կոնի մեղր»): Այս «մեղրն» իսկական բալասան է, որը բարերար ազդեցություն ունի բրոնխների վրա:

Ժամանակի ընթացքում այգու տարածքն ընդարձակվել է, ստեղծվել են նոր արահետներ, որտեղ վայրի և դեկորատիվ բուսատեսակները ներդաշնակորեն լրացնում են միմյանց՝ այս բացառիկ նախաձեռնությունն առավել գրավիչ դարձնելով: Անդրկովկասի ենթալպյան գոտում սա առաջին դեպքն է, երբ բնական անտառը վերաձևավորվել է այգու: Մյուս վայրի տեսակներից նշենք ընկուզենու (*Juglans*), բարդու (*Populus*), վայրի խնձորենու և տանձենու (*Malus sylvestris* et *Pyrus pyraster*) տեղային տեսակները:

Այգու կենտրոնում՝ գլխավոր արահետի հարևանությամբ, այցելուների ուշադրությունն են գրավում հինգ հսկա կալիֆորնիական սեքվոյաները («հինգ եղբայրները»): Դրանք դեռ բավական երիտասարդ են և լինելով իրար շատ մոտ տնկված՝ իրենց երկար կյանքի ընթացքում մի օր անպայման պիտի միանան: Այսօր արդեն շատ ուշ է դրանք իրարից հեռացնելը:

Նկարիչները հաճախ են այցելում այս այգին՝ ներշնչվելով բնության հարուստ պատկերներով, գույներով և լույսով: Շրջակա ջրային տարածքներն էլ մեծ համբավ ունեն:

Les « cinq frères » : cinq énormes séquoias de Californie au centre du parc
Այգու կենտրոնի «հինգ եղբայրները»՝ հինգ հսկա կալիֆորնիական սեքվոյաները

Des peintres fréquentent le parc pour s'inspirer de cette nature riche en variété de formes, de couleurs et de lumière. La proximité des cours d'eau est très prisée.

Il n'y a pas de liens avec les organisations internationales regroupant les parcs et jardins remarquables du monde. Seule l'ambassade de Pologne soutien ce parc compte tenu de l'origine de son créateur. Il n'y a pas de guide pour faire partager au public ses richesses, pas de brochure explicative… Pourtant Vitali aurait tant à transmettre… Le fait de dépendre directement d'un Ministère réduit l'influence des autorités locales. Les aides au développement sont quasi inexistantes. Ajoutons aussi qu'il n'existe qu'un seul panneau routier indiquant le parc sur un carrefour en épingle : il ne faut surtout pas le rater ! Quelques pavillons, en mauvais état et sans confort, sont présents dans le parc, vestiges d'habitations ouvrières et de scientifiques de l'époque soviétique. Pourquoi ne sont-ils pas réhabilités et exploités ? Dans cette région si pauvre, chaque emploi compte, c'est une famille qui vit.

Aucune initiative ne semble possible aujourd'hui autour de ce parc et c'est bien dommage. Où est le monde associatif qui en France soutiendrait un tel site ? Gageons qu'une gestion locale, désintéressée et bien épaulée par des scientifiques qualifiés serait source de richesse économique et culturelle.

Vous pouvez vous promener des heures dans les allées de tilleuls à petites feuilles (*tilia cordata*), d'arbres décoratifs et sauvages, contempler les roseraies, respirer l'air frais de la montagne. Ce parc magnifique mérite vraiment d'être au centre des préoccupations et des intérêts des scientifiques et des autorités ainsi que des éco-touristes. C'est un endroit unique pour des visites de découverte de la flore aussi bien locale qu'internationale. Ce parc, cette perle perdue dans les montagnes de Lori, est vouée à devenir un lieu prisé dans le développement du tourisme dans cette région riche d'histoire et de paysages mais gravement touchée par le chômage. À condition d'être protégée et développée intelligemment.

Louisette Lamarche et Garik Galstyan

BERGERS D'UNE TERRE ROUGE : UN RÉCIT SUR L'ARMÉNIE IMPRÉGNÉ DE NOSTALGIE

La librairie « Autour du monde » rue de Paris à Lille est un lieu qui réunit de nombreuses publications sur le thème du voyage. Où que vous vouliez aller dans le monde il y a fort à parier que vous trouverez là le guide, la carte, le roman approprié. De temps à autre, les propriétaires de cette librairie invitent un voyageur à venir parler de son périple. C'est ainsi que nous avons fait la connaissance de Xavier Vanandruel. Sa soif de rencontres et de spiritualité l'ont conduit en Arménie qu'il a parcourue à pied de monastère en monastère.

Les livres sur l'Arménie en français ne sont pas fréquents. Le lecteur intéressé par ce sujet est toujours très curieux de décou-

Դենդրոպարկը ոչ մի կապ չունի աշխարհի այգիներն ու պարտեզները միավորող միջազգային կազմակերպությունների հետ: Միայն Լեհաստանի դեսպանատունն է աջակցում այգուն՝ հաշվի առնելով հիմնադրի ազգությունը: Այգին չունի էքսկուրսավար, ով կարող է ծանոթացնել այգու հարստություններին: Չկան նաև բացատրական գրքույկներ: Մինչդեռ Վիտալին ինչքա՜ն բան կարող է մեզ փոխանցել: Նախարարությունից անմիջական կախված լինելու փաստը նվազեցնում է տեղական իշխանությունների հետ համագործակցության մակարդակը: Զարգացման համար նրանց կողմից օգնություն համարյա թե չկա: Ավելացնենք նաև, որ մայրուղու խաչմերուկներից մեկի վրա գոյություն ունի միայն մեկ դեպի այգին տանող ճանապարհային ցուցանակ. պետք է ուշադիր լինել, որ այն բաց չթողնել: Այգու տարածքում կարելի է տեսնել վատթար վիճակում գտնվող մի քանի անհարմարավետ տնակներ, որտեղ խորհրդային տարիներին ապրել են գիտնականներն ու բանվորները: Ինչո՞ւ դրանք չեն վերականգնվում և չեն օգտագործվում: Այսպիսի աղքատ մարզում յուրաքանչյուր աշխատատեղ հաշվի մեջ է և մի ընտանիք կարող է պահել:

Շատ ցավալի է, որ այսօր կարծես հնարավոր չէ այգու համար ոչ մի նախաձեռնություն ձեռնարկել: Որտե՞ղ են կազմակերպությունները, որոնք Ֆրանսիայում նեցուկ կլինեին նման տեսարժան վայրի զարգացմանը: Համոզված ենք, որ տեղական անշահախնդիր կառավարումը՝ որակյալ գիտնականների աջակցությամբ, այգին կվերածեր տնտեսական և մշակութային զարգացման աղբյուրի:

Ժամերով կարելի է զբոսնել փոքրատերև լորենիներով (*tilia cordata*), վայրի ու դեկորատիվ ծառերով շրջապատված արահետներով, հրապուրվել վարդերի պուրակներով և շնչել սարերի մաքուր օդը: Այս այգին, իրոք, արժանի է, որ գտնվի իշխանությունների, գիտնականների, ինչպես նաև էկոտուրիստների հետաքրքրության կենտրոնում: Սա մի եզակի վայր է տեղական և արտերկրի ֆլորան բացահայտելու համար: Լոռվա սարերի մեջ թաքնված այս մարգարիտն ուղղակի դատապարտված է լինելու արժանավույնս գնահատված վայր, հարուստ պատմություն ու բնաշխարհ և գործազրկության բարձր մակարդակ ունեցող շրջանի զբոսաշրջության զարգացման բնագավառում: Իհարկե, միայն այն պայմանով, որ այս ամենն արվի խելամտորեն:

Լուիզեթ Լամարշ և Գարիկ Գալստյան

«ԿԱՐՄԻՐ ՀՈՂԻ ՀՈՎԻՎՆԵՐԸ». ԿԱՐՈՏԱԽՏՈՎ ՆԵՐԾԾՎԱԾ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՄԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լիլի Փարիզյան փողոցի վրա գտնվող «Աշխարհի շուրջը» գրախանութը մի վայր է, որտեղ համախմբված են ճանապարհորդությունների թեմային նվիրված բազմաթիվ հրատարակություններ: Աշխարհի որ ծայրն էլ ցանկանաք գնալ, կարող եք վստահ լինել, որ այնտեղ կգտնեք համապատասխան ուղեցույց, քարտեզ, գրական երկ: Ժամանակ առ ժամանակ այս գրախանութի տնօրենները հրավիրում են մի ճանապարհորդի՝ պատմելու իր անցած ուղու մասին: Ահա այսպես էլ մենք ծանոթացանք Քզավիե Վանանդրուելի հետ: Հանդիպումների և հոգևոր ծարավը նրան տարել էին Հայաստան, որն էլ նա ոտքով անցել է մի վանքից՝ մյուսը:

Xavier Vanandruel
Քզավիե Վանանդրուել

Հայաստանին նվիրված ֆրանսերեն լեզվով գրքերը շատ հաճախ լույս չեն տեսնում: Թեմայով հետաքրքրվող ընթերցողը ակնկալիքով է բացահայտում նոր հրատարակությունները: Վերջին նորություններից է Քզավիե Վանանդրուելի «Կարմիր հողի հովիվները» գիրքը: Հեղինակը բելգիացի է՝ մաթեմատիկոս, փիլիսոփա և երաժիշտ: Նա մեր դատին է հանձնում իր հայաստանյան ճամփորդության պատմությունը, որն իրականացրել է ոտքով և միայնակ:



La couverture du livre *Bergers d'une terre rouge* de Xavier Vanandruel
Քզավիե Վանանդրուելի «Կարմիր հողի հովիվները» գրքի կազմը

vrir les nouvelles parutions. L'un des derniers livres sur ce thème intitulé *Bergers d'une terre rouge* est signé par Xavier Vanandruel. L'auteur est un mathématicien, philosophe et musicien belge. Il nous livre le récit d'un voyage, d'une traversée de l'Arménie à pied et en solitaire.

Découvrir le regard d'un européen sur l'Arménie est toujours digne d'intérêt, quoiqu'au travers d'un livre on découvre aussi son auteur. L'Arménie à plusieurs facettes et, avant de se plonger dans la lecture, le lecteur averti se demande quelle Arménie il va découvrir ? Les deux évènements – l'un considéré comme fondateur et l'autre sans doute le plus tragique dans l'histoire du peuple arménien – émergent dès les premières pages. Le premier est l'adoption du christianisme en 301 et le second est le génocide de 1915. On est forcé de constater que ces deux évènements, pourtant séparés de seize siècles, sont la « carte de visite » de l'Arménie. Après cette courte présentation du pays, on suit volontiers l'auteur qui, sac au dos, se déplace à pied selon un itinéraire décidé et scrupuleusement travaillé bien avant l'arrivée sur place. Il commence par le nord du pays, la vallée du Debed. Un par un il visite les monastères et églises dont les noms sont familiers aux Arméniens : Akhtala, Haghpat, Haghartsin, Khor Virap, *etc*. Le voyage s'achève au sud, à Tatev. La description de ces lieux est toujours accompagnée de données historiques. Les artistes, les poètes et les personnages historiques arméniens sont présentés et même cités quand l'occasion se présente. L'auteur nous livre ses impressions sur les rencontres avec les gens de la campagne qui, selon lui, « n'ont pas cette stratégie d'évitement devenue une norme chez nous ». Ce sont les bergers pour qui « il ressentira le plus de sympathie partagée, le même goût d'une certaine présence au monde ». Il décrit en détail la fameuse hospitalité arménienne avec ses dérives que l'on connaît bien. Il n'a pas pu y échapper : l'enchaînement des toasts à la vodka suivi d'une nuit riche de symptômes bien connus de tous.

À travers ce récit, on découvre aussi Xavier Vanandruel. Quelques citations de Pascal et de Heidegger en disent davantage sur l'auteur. Les interrogations sur le monde d'aujourd'hui, sur les relations entre la nature et l'homme, sur la société de consommation à laquelle l'Arménie n'échappe pas, sont palpables.

Ce livre avec ses très belles illustrations nous fait découvrir cette Arménie des monastères et églises, qui témoignent d'un passé riche d'une certaine splendeur intellectuelle et culturelle. En même temps, on est envahi par ce sentiment jadis considéré comme une vraie maladie qui s'appelle *la nostalgie*. La nostalgie de quelque chose qui n'existe presque plus et dont on n'a que des témoins muets, les monastères et les églises.

Ce livre est un regard sur l'Arménie, celle d'hier et d'aujourd'hui à découvrir pour ceux qui sont intéressés par ce vieux pays.

Vahé Mournet

Միշտ էլ ուշագրավ է բացահայտել եվրոպացու հայացքը Հայաստանի հանդեպ, չնայած որ գիրքը նաև լավ միջոց է բացահայտելու հեղինակին: Հայաստանը բազմաշերտ է. քաջատեղյակ ընթերցողի մոտ կարդալուց առաջ ակամայից հարց է ծագում, թե որ Հայաստանի մասին է խոսքը: Գրքի առաջին իսկ էջերից վեր են հանվում երկու իրադարձություններ. մեկը՝ հիմնարար համարվող, մյուսը՝ ամենաողբերգականը հայ ժողովրդի պատմության մեջ: Առաջինը՝ 301 թ. քրիստոնեության ընդունումն է, երկրորդը՝ 1915 թ. Ցեղասպանությունը: Ստիպված ենք փաստել, որ այս երկու իրադարձությունները, որոնք միմյանցից բաժանված են տասնըվեց դարով, հանդիսանում են Հայաստանի «այցեքարտը»: Հեղինակի կողմից Հայոց աշխարհը համառոտ ներկայացնելուց հետո ընթերցողը ճամփա է ընկնում նրա հետ, ուսապարկով և ոտքով, մանրակրկիտ մշակված հետագծով հատելով երկիրը: Ճամփորդությունը սկսվում է հյուսիսից՝ Դեբեդի հովտից: Նա մեկ առ մեկ այցելում է վանքեր և եկեղեցիներ, որոնց անունները հոգեհարազատ են հայերին. Ախթալա, Հաղպատ, Հաղարծին, Խոր Վիրապ և այլն: Վերջնակետը Տաթևն է: Այս վայրերի նկարագրությունը միշտ զուգորդված է պատմական տվյալներով: Հայ պոետները, արտիստները և պատմական դեմքերը նույնպես ներկայացվում են և նույնիսկ մեջբերվում առիթի դեպքում: Հեղինակը մեզ է հանձնում իր տպավորությունները գյուղացիների հետ հանդիպելիս, որոնք ըստ նրա «չունեն այն խուսափողական վերաբերմունքը, որը կանոն է դար-ձել մեզ մոտ՝ Եվրոպայում»: Ի

Louisette Lamarche et Xavier Vanandruel à la librairie « Autour du monde »
Լ.Լամարշն ու Քզավիե.Վանանդրուելը «Աշխարհի շուրջը» գրախանութում

վերջո պարզ ու սրտաբաց հովիվների հետ է, որ նա «ամենաշատն է կիսում փոխադարձ համակրանք և աշխարհում իր սեփական գոյությունը ճաշակելու զգացողության որոշակի ընդհանրություն»:

Հեղինակը մանրամասն նկարագրում է հանրահայտ հայկական հյուրասիրությունը իր՝ բոլորին քաջ հայտնի շեղումներով: Ք. Վանանդրուելը նույնպես չի կարողացել խուսափել դրանից. օղիով խմվող և միմյանց հաջորդող կենացների շարան, որին հետևում է հայտնի ախտանիշերով լի գիշեր:

Այս գրքի միջոցով ընթերցողը նաև բացահայտում է հեղինակին՝ Քզավիե Վանանդրուելին: Պասկալից և Հեյդեգերից մեջբերումները շատ բան են ասում հեղինակի մասին: Արդի աշխարհի, սպառողների հասարակության, բնության մեջ մարդու տեղի մասին հարցադրումները, որոնցից Հայաստանը չի խուսափում, շոշափելի են:

Գեղեցիկ պատկերազարդումներով այս գիրքը հնարավորություն է տալիս բացահայտել վանքերի և եկեղեցիների Հայաստանը: Վանքեր և եկեղեցիներ, որոնք վկայում են մշակութային և մտավոր հարուստ անցյալի գոյության մասին: Միևնույն ժամանակ, ընթերցելիս ակամայից լցվում ես անցյալում խսկական հիվանդություն համարվող մի զգացողությամբ, որը կոչվում է «կարոտախտ»: Կարոտախտ առ այն, ինչն այլևս գրեթե գոյություն չունի և որի համր վկաներն են այս վանքերն ու եկեղեցիները:



Այս գիրքը մի հայացք է Հայաստանին, ինչպես երեկվա, այնպես էլ այսօրվա : Հայացք, որը կարող է բացահայտող լինել բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են այս հինավուրց երկրով:

Վահե Մուռնե



ASSOCIATION ARARAT
1 Place Vauban, appt. 122
59 370, Mons en Baroeul

BULLETIN D'ADHESION

Nom, Prénom ____

Adresse ____

Mail ______________________________ Téléphone ______________________________

Adhère à l'association ARARAT pour l'année 2013/2014 et a payé une adhésion de 15 EUR (par famille)

(Date et Signature)

Ont collaboré avec ce numéro:
Jaqueline Kasparian, Aude Merlin, Margarit Khachatryan, Haïk Ghambarian, Vahé Mournet, Susanna Mughnetsyan, Hovhannes et Haykuhi Arakelian

Այս համարի նյութերի նախապատրաստմանն օժանդակել են՝ Ժակլին Կասպարյանը, Օդ Մերլենը, Մարգարիտ Խաչատրյանը, Հայկ Ղամբարյանը, Վահե Մուրնեն, Սուսաննա Մուղնեցյանը, Հովհաննես և Հայկուհի Առաքելյանները

Pour contact et pour toute remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@gmail.com
Par courrier : 12, Rue Blériot, 59 260, Hellemmes-Lille, France
Par téléphone : 09.83.03.88.30, 09.51.36.49.21

Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային փոստ՝ aadelille@gmail.com
Փոստային հասցե՝ 12, Rue Blériot, 59 260, Hellemmes-Lille, France
Հեռախոսներ՝ 09.83.03.88.30, 09.51.36.49.21

Responsables de publication en français :
Louisette Lamarche, Garik Galstyan
Responsable de publication en arménien : Garik Galstyan
Traductions : Garik Galstyan, Haïk Ghambarian, Haykuhi Arakelian, Vahé Mournet

Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատուներ՝
Լուիզեթ Լամարշ, Գարիկ Գալստյան
Հայերեն հրատարակչության պատասխանատու՝ Գ. Գալստյան
Թարգմանությունները՝ Գարիկ Գալստյանի, Հայկ Ղամբարյանի, Հայկուհի Առաքելյանի, Վահե Մուրնեի

Imprimé par nos soins.
À ne pas jeter sur la voie publique.

Տպագրված է մեր միջոցներով:
Չգցե՛լ հասարակական վայրերում:

ISSN 2117-5772

ISSN 2117-5772